



Փարամազի յուշարձանը Մեղրիի մէջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

105 Տարիներ Ետք՝ Քսաններուն Պատգամը Կը Մնայ Այժմեական

1915 թուականի Յունիսի 15-ին, Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ կախաղան բարձրացան Հնչակեան կուսակցութեան քաղաքական փաղանգի քսան՝ ամենէն կարկառուն դէմքերը, որոնք անցնելով օսմանեան կայսրութեան դէմ Հայ ժողովուրդի մղած պայքարներու բովէն ու կուտակելով յեղափոխական գործունէութեան երկարամեայ փորձ, կը ծրագրէին զայն ծառայեցնել Արեւմտահայութեան սպառնացող դաժան ճակատագրի ընթացքը շեղելու եւ Յեղասպանութիւնը կանխելու նպատակին:

Այդ սարսափազդու օրուանէն մօտ երկու տարիներ առաջ՝ 1913 թուականի Սեպտեմբերին, Ռումանիոյ Կոստանցա քաղաքին մէջ կայացած Հնչակեան կուսակցութեան 7-րդ Համագումարը, կանխատեսելով համազգային վտանգը, որոշած էր ահաբեկել Հայութեան ոչնչացումը ծրագրող եւ ի վերջոյ գործադրութեան դնող երիտ թուրքերու իշխող կուսակցութեան ղեկավարները՝ Թալեաթը, Էնվերը եւ Ջեմալը: Այդ վճռական ծրագրի գործադրութեան գլխաւոր ղեկավարը կը հանդիսանար Մեղրիի գաւազ Մաթեոս Սարգիսեան, որ ծանօթ էր Փարամազ անունով:

Պոլիս վերադառնալէ ու նախապատրաստական աշխատանքներու ձեռնարկելէն ետք, Փարամազ եւ իր ընկերները զոհ գացին մատուցեան: Փակուեցան Կուսակցութեան գրասենեակներն ու թերթերը: Չերբակալուեցան բազմաթիւ գործիչներ, որոնցմէ քսանը հետագային դատապարտուեցան մահուն՝ իրենց բախտը նոյնանալով Հայ ժողովուրդի 1,5 միլիոն զոհերու ճակատագրին հետ:

Ամէն տարի այս օրերուն նշելով Քսաններուն տարելիցը, մենք վեր կ'առնենք անոնց պատգամները, որոնք կը մնան արդիական ու նպատակները իրագործելի մեր ներկայ իրականութենէն ներս: Փարամազ եւ իր նուիրելի ու խիզախ ընկերներու հոյլը կախաղանի վրայ իրենց արտասանած վերջին խօսքերով կանխատեսեցին Հայ ժողովուրդի ապագան: «Վաղը արեւելքի հորիզոնին դուք պիտի ողջունէք ազատ ու ընկերվար Հայաստանի ծնունդը», «Դուք մեզ քսաններս կը կախէք, սակայն քսան հազարներ պիտի գան մեր գործը շարունակելու» անտեսցին անոնք:

Հայաստանի Մէջ Տեղի Ունեցաւ Ուժային Կառոյցներու Ղեկավարներու Փափոխութիւն



Ուժային կառոյցներու նորանշանակ ղեկավարները՝ Արգիշտի Քեարամեան (ԱԱԾ), Օնիկ Գասպարեան ինուած (Գլխաւոր Շտաբի պետ), Վահէ Ղազարեան (Ոստիկանապետ)

Վարչապետ Նիկոլ Փաշինեան փոփոխութեան ենթարկեց միանգամայն Հայաստանի ուժային երեք կառոյցներու ղեկավարները՝ գորաբանակի-գորավար (գեներալ-լեյտենանտ) Օնիկ Գասպարեանը նշանակուեցաւ Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի (Հրամանատարութեան) պետ, գնդապետ Արգիշտի Քեարամեանը՝ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) տնօրէն, իսկ գնդապետ Վահէ Ղազարեանը՝ Ոստիկանութեան պետ: Գնդապետ Մարտիրոսեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԴՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Պահն է Համախմբման, Այլ Ոչ Թէ Տրոհման

ՄԴ Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնական Վարչութիւնը իր խոր մտահոգութիւնն է արձանագրում Հայաստանում կորոնավիրուսի վարակվածութեան ու մահացութեան վտանգաւոր աճի կապակցութեամբ, ինչն արդէն առողջապահական խնդրից սպառնում է վերածուել ազգային անվտանգութեան հարցի:

Անշուշտ, ինչպէս ամբողջ աշխարհում՝ Հայաստանում եւս այս աննախադէպ համաճարակը առաջացրել է հանրային ու տնտեսական ծանր ճգնաժամ: Հազարաւոր մարդիկ կորցրել են իրենց աշխատանքը, սպառել իրենց վերջին միութեան միջոցներն ու յայտնուել աղքատութեան ու նոյնիսկ սովահարութեան շեմին: Միւս կողմից, բազմաթիւ անպատասխանատու քաղաքացիներ, չպահպանելով համաճարակի կանխարգելմանն ուղղուած անվտանգութեան կանոնները, վարակում եւ վարակում են՝ առաւելագոյնս ծանրաբեռնելով արդէն իսկ ծայր աստիճան գերբեռնված առողջապահական համակարգը:

Ի տես այս բոլորի, երբ այս անտեսանելի թշնամու դէմ պայքարը պահանջում է միասնական ուժերի գերլարում, քաղաքացիական բարձր գիտակցութիւն ու կարգապահութիւն, այսօր մենք ականատես ենք լինում քաղաքական պատեհապաշտութեան գերագոյն դրսեւորման, երբ ընդդիմադիր կուսակցութիւնները՝ ներկայ իշխանութիւններից օգնութեան ձեռք մեկնելու փոխարէն, միանում են նախկին վարկաբեկուած իշխանութեան ներկայացուցիչներին ու կառավարութեան հրաժարականն են պահանջում: Այսօր, երբ համաճարակի կասեցումը պէտք է լինի միակ հրամայականը, նման պահանջը խիստ անպատեհ է ու անընդունելի: Ի հարկէ, սա չի նշանակում, որ կառավարութեան կողմից համաճարակի դէմ պայքարի գծով առնուած քայլերն ու որոշումները անթերի են: Վերջիվերջոյ, այդ պայքարի արդիւնաւետութեան ու համարժեքութեան գլխաւոր պատասխանատուն ներկայ կառավարութիւնն է եւ պիտի հաշուետու լինի քաղաքացու առաջ, բայց միանշանակ ոչ այս պահին:

Ուստի, ելնելով վերոնշեալից, ՄԴ Հնչակեան կուսակցութեան Կենտրոնական Վարչութիւնը կոչ է անում մեր հայրենակիցներին խստիւ պահպանել կանխարգելման բոլոր կանոնները, իսկ կուսակցութիւններին՝ մի կողմ թողնել ամէն տեսակի տարակարծութիւն ու դժգոհութիւն, համախմբուել իշխանութեան շուրջ եւ միասնական ջանքերով յաղթահարել այս լրջագոյն մարտահրաւերը:

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Մնացել են Փեսայի Կեղծ Մատնագրերի Յոյսին

Ծանրագոյն պահերին մեր ժողովուրդը միշտ էլ կարողացել է համախմբուել ու դուրս գալ անելանելի թուլացող իրավիճակներից: Ժիշտ է, եթէ համախմբուած լինէինք ոչ միայն ծանրագոյն պահերին, այլև միշտ, անելանելի թուլացող իրավիճակներում երեւի չէինք էլ յայտնուի, բայց սա այլ թեմա է: Ու թւում էր, թէ հիմա, երբ համաճարակային իրավիճակն ասագնացող չափերի է հասել ու սպառնում է վերածուել լայնամասշտաբ աղէտի, մեզ դարձեալ կը յաջողուէր համախմբուել ու միասնական ջանքերով շատ արագ յաղթահարել այս վիճակը: Յաւօք՝ դա, մեղմ ասած, առայժմ այնքան էլ այդպէս չէ: Այնպիսի տպաւորութիւն է, թէ մենք ունակ ենք համախմբուել միայն արտաքին սպառնալիքի դէպքում, այն էլ՝ եթէ վտանգուած է ազգի ֆիզիկական գոյութիւնը, իսկ եթէ ամէն մէկը մտածում է, որ անձամբ իրեն վտանգը կարող է շրջանցել՝ համախմբման մասին խօսք լինել չի կարող:

Իրականութիւնն այն է, որ կորոնավիրուսի համաճարակը Հայաստանի համար անուղղակիօրէն նաեւ արտաքին սպառնալիքներ է պարունակում: Որովհետեւ սոցիալ-տնտեսական իրավիճակը վատթարանում է, ու աղբիւրները կարող են փորձել օգտուել առիթից՝ համարելով, որ նոր պատերազմ սկսելու ամենայարմար պահն է: Յամենայն դէպս նրանց հետտրաբանութիւնն օրէցօր աւելի ու աւելի ազդեալ է դառնում, հավակնութիւններն էլ տարածուած են արդէն ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետութեան վրայ:

Աղբիւրների պահուածքը հասկանալի է. թշնամի է՝ պիտի փորձի օգտուել մեր դժուարութիւններին, բա ուրիշ ինչ պիտի անի: Իսկ ինչ ենք անում մենք՝ համախմբուելու փոխարէն: Սերժ Սարգսեանի փեսան հերթական խոհանոցային բամբասանքներն է տարածում, թէ բա գիտէ՞ք, Հայաստանը ոչ մի ժամանակակից զինատեսակ էլ ձեռք չի բերել, եղածը մետաղի ջարդոն է, որն աշխարհի շատ երկրներ ձրի են տալիս՝

վերցնող չկայ, Նիկոլ Փաշինեանն էլ Հայաստանը ներքաշել է գէնքի ապօրինի վաճառքի միջոցապահ յանցաւոր սխեմաների մէջ: Թւում է՝ քանի որ խօսքը հայերէն է, փեսան հայ ժողովրդին է դիմում: Իրականում նրա «ուղերձը» երկու այլ հասցէատէրեր ունի: Առաջինն ուղղուած է Ռուսաստանին. «էլ Հայաստանին գէնք չծախէք, դրանք գէնքը ձեր ներքին գներով առնում են ու աւելի թանկ վաճառում երրորդ երկրներին»: Իսկ երկրորդ ուղերձն Աղբիւրներին է ուղղուած. «Հաւատաք ժամանակակից զինատեսակներին, բան ունէք անելու՝ արէք, որ մենք էլ ներսում առիթից օգտուենք ու մեր գործն անենք, սրանից յարմար պահ էլ երբ էք ունենալու»: Սա է, չէ, ըստ հուսկեան, Միքայէլ Մինասեանի ասածը, եթէ մի կողմ ենք թողնում կեղծ հայրենասիրական դատարկաբանութիւնները: Այսինքն՝ մարդը յատակ, հետեւողականօրէն աշխատում է իր երկրի դէմ, թէ ինչ է՝ թոյլ չեն տալիս հանգիստ վայելել կուտակած միլիոնները ու դեռ մի բան էլ (ինչպիսի լկտիութիւն) քրէական գործեր են յարուցել:

Միեման, ի հարկէ, նոր չէ: Բոլոր ժամանակներում էլ յօգուտ թշնամիների սեփական երկրի դէմ աշխատողներին այդպէս են հաւաքագրել՝ ընտրել են նրանց, ովքեր իրենց հայրենիքում պրոբլեմներ ունեն, ծանր յանցանքներ են գործել, ատում են իշխանութիւններին եւ այլն: Բայց զուտ մարդկայնօրէն ամենաողորմելիները նրանք են, ովքեր ինքնակամ են հաւաքագրուում, թէեւ մօտիվացիան մօտաւորապէս նոյնն է. ինչ տարբերութիւն՝ դրա դիմաց փող են ստանում, թէ՛ դա անում են արդէն իսկ սեփական երկրից թաւանածը պահպանելու համար:

Իսկ այդ ընթացքում հանրապետականներն իշխանութիւններին մեղադրում են Աղբիւրների ազդեալ հետտրաբանութիւնները համարժէք արձագանք չտալու մէջ: Իրենց կուսակցական առաջնորդի փեսայի յորինովի «գանոսները» տարածելուն գուզահեռ:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Վարչապետի Փոթորկալից Վերադարձը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Յունիսի 1-ին կորոնավիրուսով վարակուած լինելու մասին տեղեկացնելուց յետոյ, Յունիսի 8-ին վարչապետ Փաշինեանը հանրութեանը յայտնեց կորոնավիրուսից բուժուած լինելու եւ լիարժէք աշխատանքի վերադառնալու մասին: Ընդ որում, վերադարձը ոչ միայն լիարժէք էր, այլ թերեւս փոթորկալից: Յամենայն դէպս, վերադառնալով աշխատանքի, վարչապետ Փաշինեանը պաշտօնանկ արեց ուժային բոլոր երեք նշանակալի պաշտօնեաների՝ ԱԱԾ պետ, ոստիկանութեան պետ, ԶՈՒ ԳՇ պետ: Ընդ որում, ԳՇ պետի պարագայում կարծես թէ կալ պատճառ՝ արտակարգ դրութեան կանոնի խախտում եւ որդու հարսանիքի կազմակերպում: Բայց, դատելով դրա վերաբերեալ արձուակին նրա արձագանքից, Արտակ Դաւթեանն ըստ ամենայնի սպասել է պաշտօնանկութեան, ինչի համար էլ որոշել է չկանգնել եւ գնացել է ակնյայտ խախտման՝ միեւնոյն է չէր մնալու պաշտօնին: Դա ի հարկէ տպաւորութիւն է:

Բայց կասկածից վեր է, որ ուժային երեք առանցքային դէմք փոխելով տպաւորութիւն է գործում նաեւ վարչապետ Փաշինեանը, այսպէս ասած իրականացնելով տպաւորիչ վերադարձ կորոնավիրուսից:

Մինչ այդ, հանրութեան վրայ բաւականին մեծ տպաւորութիւն էր թողել ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկեանը, որն իր հերթին կարծես թէ փորձում էր իրականացնել տպաւորիչ վերադարձ այն համակարգի շրջանակ, որի կազմում էր մինչեւ թաւշեայ յեղափոխութիւնը: Գագիկ Ծառուկեանը միացաւ վարչապետի պաշտօնանկութեան օրակարգին եւ յայտարարեց, որ նախկինում կառավարութեան 97 տոկոսի հրաժարական էր պահանջում, այժմ՝ 100 տոկոսի:

ԲՀԿ նախագահն ի հարկէ խոհեմաբար չտուեց վարչապետի անունը, թէեւ վարչապետը կառավարութեան մաս է ըստ Սահմանադրութեան, այսինքն 100 տոկոսի մաս: Բայց ԲՀԿ նախագահն ըստ երեւոյթին քաղել է նախկինի կարեւոր դասը, չգնալով կամուրջներն ամբողջապէս այրելու ճանապարհով: Աւելին, հնարաւոր է, որ ԲՀԿ նախագահն ընդհանրապէս չի էլ գնացել նախկին համակարգ վերադարձի ճանապարհով, այլ կատարել է իր յետյեղափոխական հերթական գործառույթը, ինչպէս 2018-ի Հոկտեմբերի 2-ին, երբ միանալով ՀՀԿ-ին՝ փաստացի բացեց խաղն ու խթանեց արտահերթ ընտրութեան արագացում:

Այժմ էլ, անելով կառավարութեան հրաժարականի մասին յայտարարութիւն, Գագիկ Ծառուկեանը գործնականում արեց «Հոկտեմբերի երկու-2»՝ ստեղծել Նիկոլ Փաշինեանի վերադարձի մթնոլորտ, ուժային բոլոր խոշոր փոփոխութեամբ:

Փաշինեանը այդ բոլորից սպասել է «դաւադրութիւն»։ Ամենեւին: Հայաստանը ցոյց է տուել յեղափոխութեան ուժը, քանի դեռ չկայ յեղափոխութեան արդիւնաւէտութիւնը համակարգային ուժի վերածելու ունակ արդիւնք: Այդ ուժի ցուցադրութիւնը եղել է արտաքին սպառնման համար: Այն, ինչ կատարուում է ներկայումս Հայաստանում, ընդամէնը համաշխարհային իրադրութեան արտացոլումն է, մասնաւորապէս ռուսա-

կան տնտեսա-քաղաքական վերնախաւի խնդիրների տեսքով: Այդ վերնախաւն ունի աշխարհակարգային լրջագոյն խնդիրներ, միեւնոյն ժամանակ՝ իշխանութեան խնդիր ՌԴ ներսում:

Մոսկուայի աշխարհաքաղական ստագնացիան ու իշխանութեան սուր խնդիրը Ռուսաստանը ներկայիս փուլում դարձնում են բաւականին անկանխատեսելի, եւ թուրք-աղբիւրները շանական ազդեցութեան մշտական խոցելիութեան առումով բազմապատիկ աւելի խոցելի: Դա էլ իր հերթին առաջացնում է ռեզիտնալ անվտանգութեան վակուումի վտանգ:

Հայաստանը ներկայումս դիմագրաւում է այդ վտանգին, որն արտացոլում է նաեւ Հայաստանի ներքին կեանքում մի շարք սուբյեկտների վարքագծային փոփոխութեամբ: Ինչո՞վ է պայմանաւորուած այդ փոփոխութիւնը՝ պարզապէս ռուսական խմբերին ՈԶ սակու անկարողութիւնից, թէ պարզապէս կոլաբորացիոնիստական հակամտերից, բաւական բարդ է ասել, որովհետեւ այդ խմբերի մի մասն ինքը ոչ վաղ անցեալում կանգնած էր Ռուսաստանից եկող նոյն վտանգների յանդիման:

Սակայն, կամայ, թէ ակամայ, նրանք ի հարկէ խթանեցին յեղափոխութեան հակառակ արձագանք եւ ուժի ցուցադրութիւն: Ամբողջ հարցն այն է, որ այդօրինակ մեխանիզմով յեղափոխութեան ուժի գեներացումը կարող է ունենալ սահմանափակ ռեսուրս, եւ իշխանութիւնը պէտք է բազմապատիկ կառավարման արդիւնքը համակարգային ուժի վերածելու էֆեկտիւնութիւնն ու արագութիւնը: «ԼՐԱԳԻՐ»

Քաղաքական Կեանքը Շարունակուում է

ԱՐԱՍ ԱՐԲՈՂԱՍԵԱՆ

Կարելի է արդեօք կորոնավիրուսի վարակի տարածման այս վտանգաւոր ժամանակաշրջանում զբաղուել քաղաքականութեամբ: Ժիշտն ասած, այս հարցի պատասխանը ես չունեմ: Բայց պարզ է մի բան՝ եթէ չի կարելի, ապա այդ արգելքը պէտք է տարածուի բոլոր քաղաքական ուժերի վրայ. չի կարող պատահել, որ իշխանութեանն ու իշխանամէտ գործիչներին թոյլատրուի զբաղուել քաղաքականութեամբ, իսկ ընդդիմադիրներին՝ ոչ: Զուտ տեսականօրէն ես կարող եմ պատկերացնել այնպիսի մի տարբերակ, երբ ժամանակաւորապէս, մինչեւ յատուկ դրութեան աւարտը կասեցուում է խորհրդարանի աշխատանքը եւ բոլոր (չեչտեմ՝ բոլոր) կուսակցութիւնների գործունէութիւնը: Բայց սոցիալական ցանցերի դարուց մյուս տարբերակն, ըստ հուսկեան, հնարաւոր չի լինի իրագործել: Մնում է

շարունակել ապրել սովորական քաղաքական կեանքով՝ ի հարկէ, իրավիճակից ելնելով, պահպանելով, որքան հնարաւոր է, էթիկական որոշ նորմեր: Այստեղ էլ առանձնապէս լաւատես չեմ, որովհետեւ «քաղաքականութիւն» եւ «էթիկական նորմեր» հասկացութիւններն, իմ կարծիքով, անհամատեղելի են: Որքանո՞վ բնական կը լինէր, որ խորհրդարանում առաւել խոշոր ընդդիմադիր խմբակցութեան ղեկավարը այս բարդ իրավիճակում ոչ մի ձայն չհաներ: Ինձ թւում է, նա պարտաւոր էր ներկայացնել իր մօտեցումները: Որքանո՞վ են Գագիկ Ծառուկեանի մօտեցումները ճիշտ, որքան՞ գրագէտ են շարադրուած, դա այլ հարց է, բայց նա, ինչպէս նաեւ իր եւ մնացած խմբակցութիւնների պատգամաւորները, պարզապէս իրաւունք չունեն լռելու:

Ի հարկէ, իշխանութիւններ-

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՏԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլեան ԲՆՈՒՅ Յանձնաժողովի Ժամկետը Աւարտած է՝ Զեկոյցը կը Ներկայացնէ Աշնան

2016 թուականի Ապրիլեան պատերազմի հանգամանքները ուսումնասիրող քննիչ յանձնաժողովի լրագորութիւններու ժամկէտը աւարտած է:

Յանձնաժողովը ստեղծուած էր անցեալ տարի Մայիս 31-ին, լրագորութիւններու ժամկէտը եւս կէս տարիով երկարաձգուած էր Դեկտեմբերին: Զեկոյցը, քննիչ յանձնաժողովը կը ներկայացնէ աշնան:

«Ապրիլեան պատերազմին վերաբերող գաղտնի եւ ոչ գաղտնի ամբողջ տեղեկատուութիւնը այս պահին գտնուում է Ազգային ժողովում», - «Ազատութեան» հետ գրոյցի ընթացքին ըսաւ յանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարեան:

Քոչարեանի փոխանցումով՝ իրենց ձեռքին տակ հազարաւոր էջերով ցուցմունքներ ունին, հարիւր ժամէ աւելի տեսանիւթեր, մէկ տարուայ ընթացքին ամբողջադրած են այն նիւթերը, որոնք կը կարողանան լոյս սփռել քառօրեայ պատերազմի հանգամանքներուն վրայ:

«Երեք հիմնական հարցերի պատասխան պէտք է մենք կարողանանք տանք՝ մինչ Ապրիլեան պատերազմը մեր անվտանգութեան համակարգը պատրաստ էր նման գործողութիւններին կանխարգելելու, երկրորդը՝ բուն պատերազմի ընթացքում մենք ամբողջութեամբ կարողացա՞նք ճիշտ օգտագործենք մեր Զինուած ուժերի հնարաւորութիւնները, եւ այն կասկածները, որ առաջնագծի մեր զինուորները մնացել են մենակ, կամ պետութիւնը լրարժէք չի կատարել իր հիմնական կառավարման խնդիրները՝ էջ հարցերի բոլոր պատասխանները մենք կու տանք եզրակացութեան մէջ, եւ վերջնափուլում՝ հակառակորդը ինչու՞ սկսեց եւ ինչպէ՞ս աւարտուեց Ապրիլեան պատերազմը, այսինքն՝ բանակցային գործընթացը, դրա մէջ բաւականին հետաքրքիր նրբե-



Ապրիլեան պատերազմի յանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարեան

րանգներ կան», - նշեց Քոչարեան: Այս մէկ տարուայ ընթացքին, ըստ յանձնաժողովի նախագահին, հիմնականօրէն հարցաքննած են բոլոր կարեւոր անձերը, նախկին նախագահ, վարչապետ, արտաքին գործոց նախարար, բացի 2016-ին Զինուած ուժերու գլխաւոր շտաբի պետի պաշտօնը զրաւած Եուրի Խաչատուրովէն. - «Եւ այդ մէկի բացակայութիւնը արդէն այդ մէկի խղճին է մնում»:

Հարցին, թէ «արդեօք այն, որ Խաչատուրովը չեկաւ, դրանից զեկոյցը շատ կը տուժի», Քոչարեան արձագանգեց. - «Քիչ: Որովհետեւ Խաչատուրովի գալը պէտք էր առաջին հերթին Խաչատուրովին, որովհետեւ ինքն է եղել համար մէկ զինուորական պաշտօնեան, եւ Խաչատուրովի չգալով՝ ինքը արհամարհեց իր կառավարման տարիները, որովհետեւ իր ենթակայները, ովքեր անհրաժեշտ են եղել գալ, իրենք եկել են եւ շխտաւել են մեզ հետ սիրով, ընդ որում՝ անկեղծ: Չգալը խօսում է, որ ինչ-որ բան էն չի: Այդ ինչ-որ բանի մասն է, որը որ հիմա ես չեմ հնչեցնի, եւ դա արդէն այլ ուսումնասիրութեան խնդիր է»:

ՊԵԿ-ը Միքայէլ Մինասեանի Գործի Մասին Մանրամասնութիւններ Հրապարակած Է

Պետական եկամուտներու կոմիտէն (ՊԵԿ) հաղորդագրութիւն տարածած է մանրամասնութիւններ ներկայացնելով Սուրբ Աթոռին մօտ Հայաստանի նախկին դեսպան Միքայէլ Մինասեանի նկատմամբ յարուցուած քրէական գործի վերաբերեալ:

«Քրէական գործի նախաքննութեամբ հիմնաւորուել է, որ Միքայէլ Մինասեանը հանդիսանալով «Հանրային ծառայութեան մասին» ՀՀ օրէնքով սահմանուած՝ յայտարարագիր ներկայացնելու պարտականութիւն ունեցող անձ, հաշուետու ժամանակահատուածում, այն է 2017-2018թթ. ընթացքում, միլիոնաւոր դրամի չափով աւելացրել է իր գոյքը, որն էականօրէն գերազանցել է իր օրինական եկամուտները եւ ողջամտօրէն չի հիմնաւորուել դրանցով, այսինքն ապօրինի հարստացել է», - նշուած է հաղորդագրութեան մէջ:

ՊԵԿ-ը կը շարունակէ, - «Քննութեամբ ձեռք բերուած տուեալների համաձայն պարզուել է նաեւ, որ բացի նախկինում մեղսագրուած արարքներից, Միքայէլ Մինասեանը 2012-2018 թթ. ժամանակահատուածում, կասկածելի



Նախկին դեսպան Միքայէլ Մինասեան

աղբիւրներից ստացած խոշորածաւալ ֆինանսական միջոցներով, քողարկուած եղանակով, Սքոթլանտայում հաշուառուած օֆշորային «Ուոլտերս Էքսփրես Էլ Փի» կազմակերպութեան միջոցով եւ ապա իր մտերիմներից Ռոպա Ստեփանեանի միջոցով, վերջինիս օժանդակութեամբ հանդիսացել է «Սփայթ» ՍՊ ընկերութեան 49 տոկոս բաժնեմասի փաստացի բաժ-

Փաշինեանն ու Ընտանիքի Անդամները Ապաքինուած Են

Վարչապետ Նիկոլ Փաշինեանն ու իր ընտանիքի անդամները ապաքինուած են: Այս մասին Հայաստանի վարչապետը յայտնած է Ֆէյսպուքի իր էջով:

Վարչապետը գրած է, որ այսօր՝ Յունիս 8-ին, ստացած են կրկնակի հետազօտութեան պատասխանները եւ բոլորինը բացասական են: Բացասական պատասխաններ ստացած են նաեւ երէկ:

«Ի հարկէ, մեր վարակուելու ժամկէտները եւ հանգամանքները պէտք է որոշակիօրէն վերանայնէք: Բայց այս պահին կարեւոր է, որ մենք բոլորս առողջ ենք: Ես վերադառնում եմ լրարժէք աշխատանքի», - գրած է Փաշինեան:

Քրեական Գործեր Կան, Որոնք կը Մտահոգեն Գագիկ Ծառուկեանը. Սուրէն Պապիկեան

«Ես հասկանում եմ, որ պարտն Գագիկ Ծառուկեանը նման յայտարարութեամբ ու յայտով է հանդէս գալիս ու գործող կառավարութեանն անվստահութեան յայտ է ներկայացնում: Բայց դա չի ենթադրում, որ դա իրականութիւն է, դա ԲՀԿ (Բարգաւաճ Հայաստան կուսակցութիւն) ու անձամբ Գագիկ Ծառուկեանի խնդիրն է: ՀՀ քաղաքացիները 2018 թուականին իրենց վստահութեան քուէն են տուել մեր քաղաքական ուժին, եւ մենք պաշտօնավարելու ենք ՀՀ շահին ու քաղաքացուն», - Ազգային ժողովի լրագրողներուն հետ ճեպագրոյցին ըսաւ Քաղաքացիական պայմանագիր կուսակցութեան վարչութեան նախագահ՝ Սուրէն Պապիկեան:



Քաղաքացիական պայմանագիր կուսակցութեան վարչութեան նախագահ՝ Սուրէն Պապիկեան

Պապիկեան նշեց, որ Գագիկ Ծառուկեանի յայտարարութիւնը անսպասելի պոռթկում մըն է, բայց միաժամանակ փաստ է, որ ունի որոշակի պատճառներ: «Ակնյայտ է, որ տարբեր հարցեր կան, նաեւ տարբեր քրէական գործեր, որոնք գուցէ մտահոգում են մեր գործընկերներին: Մենք խօսում ենք մարդկանց մասին, ովքեր տարիներ շարունակ հակայական կարողութիւն ու գոյք են կուտակել: Աժ-ն հաւանութեան է արժանացրել Ապօրինի գոյքի բռնագանձման մասին օրէնքը, եւ առաջիկայում այն ուժի մէջ է մտնելու: Ես ուղղակի համբերութիւն եմ մաղթում մեր գործընկերներին եւ ուզում եմ, որ իրենք հետեւողականօրէն փորձեն ապացուցել, թէ ինչպէս են կուտակել այդ հարստութիւնը», - ըսաւ Պապիկեան:

Թուում՝ տարբեր մեղքեր իշխանութեան վզին փաթաթելու միտում է: Դա ոչ միայն վատ է, այլ տարբեր տրամաչափի քաղաքական գործիչների արուած յայտարարութիւններն ըստ էութեան ՀՀ քաղաքացու ու պետականութեան դէմ են», - նշեց Պապիկեան:

Պապիկեան ըսաւ, որ իշխանութիւնը որեւէ մտահոգութիւն չունի, իրենց դիրքերը ամուր են, քանի որ իշխանութիւնը ձեւաւորուած է ազատ ու արդար ընտրութիւններու արդիւնքով: «Եւ որեւէ քաղաքական միաւոր ու գործիչ, եթէ ՀՀ Սահմանադրութեանը հակասող քայլեր փորձի կատարել, կը պատժուի: Մենք ոչ միայն սա կը յաղթահարենք, այլեւ համավարակից յետոյ կ'անդրադառնանք շատ հարցերի», - աւելցուց Պապիկեան:

Լրագրողները հետաքրքրուեցան, թէ Գագիկ Ծառուկեան սակաւապետ է, թէ սեփականատեր: Պապիկեան պատասխանեց՝ Ծառուկեանը չի կրնար օլիգարխ ըլլալ, քանի որ փոխկապակցուած չէ իշխանութեան հետ:

«Անձը եւ իր կարողութիւնները չեն փոխուել, սակայն սակաւապետական համակարգի փոխկապակցուածութիւն իշխանութեան հետ այլեւս գոյութիւն չունի: Գուցէ դա է պատճառը, որ մեր գործընկերները մտահոգուած են, որովհետեւ չեն կարողանում ինչ-որ փոխ զիջումներ գտնել իշխանութեան հետ», - աւելցուց Պապիկեան:

նետէրը, որի վերաբերեալ տուեալները չի ներառել իր՝ պաշտօնատար անձի 2017 թուականի եւ 2018 թուականի յայտարարագրերում:

«Քրէական գործի նախաքննութեան շրջանակում միջոցներ են ձեռնարկուում մեղադրեալների եւ միւս հնարաւոր յանցակիցների

կողմից կատարուած հանրօրէն վտանգաւոր արարքների բոլոր հանգամանքները բացառապէս, անձանց, կազմակերպութիւնների եւ (կամ) պետութեանը պատճառուած վնասները, ինչպէս նաեւ հասարակական արդարութիւնը վերականգնելու ուղղութեամբ», - կը փոխանցէ ՊԵԿ-ը:

ԼՈՒՐԵՐ

«ԱԱԾ-ն Պետք է Աւելի Գործնականորեն Կարողանայ Արձագանգել Մարտահրաւերներուն». Վարչապետ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան կը ներկայացուցնէ ԱԱԾ-ի նորանշանակ տնօրէն Արգիշտի Քեարամեանը

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Յունիս 9-ի Ազգային անվտանգութեան ծառայութեան ղեկավար կազմին ներկայացուցած է ԱԱԾ-ի նորանշանակ տնօրէն Արգիշտի Քեարամեանը:

Վարչապետը նախ շնորհակալութիւն յայտնած է Էտուարտ Մարտիրոսեանին ԱԱԾ-ի, որպէս տնօրէն եւ անկէ առաջ ալ, որպէս տնօրէնի տեղակալի կատարած աշխատանքին համար: Նիկոլ Փաշինեան նշած է, որ ան ԱԱԾ-ի տնօրէն աշխատած է բաւական բարձր ժամանակաշրջանի մը, եւ յառաջիկային առիթ կ'ըլլայ քննարկելու այս ընթացքին կատարած համատեղ աշխատանքը եւ հետագայ ընելիքները:

Ներկայացնելով ԱԱԾ-ի նորանշանակ տնօրէն Արգիշտի Քեարամեանը՝ կառավարութեան ղեկավարը անոր յաջողութիւն մաղթած է այս կարեւորագոյն պաշտօնի գործունէութեան համար: «Ուզում եմ ընդգծել, որ, ի հարկէ, ԱԱԾ-ն ուժեղ, կայացած, գործունէաց կառույց է, բայց պէտք է արձանագրենք նաեւ, որ մարտահրաւերները եւ դրանց արձագանգելու ընթացքը, արագութիւնը, որակն անընդհատ բարելաւուելու եւ բարեփոխուելու, լաւարկուելու կարիք ունեն: Պարոն Քեարամեանի առաջ ես հենց այդ խնդիրն եմ դրել, որպէսզի ԱԱԾ-ն աւելի ազդեցիկ կարողանայ արձագանգել այն մարտահրաւերներին, որոնք մենք ունենում ենք անվտանգութեան ոլորտում: Ընդ որում՝ անվտանգութիւն ասելով - եւ այդ հասկացութեան նշանակութիւնը

ժամանակի ընթացքում փոխուում է - ի յայտ են գալիս նոր մարտահրաւերներ, որոնք նախկինում գուցէ ընդհանրապէս կանխատեսուած չէին՝ սկսած ընթացիկ ամենամեծ խնդրից՝ «Քորոնա» ժահրի համավարակից, շարունակած տեղեկատուութեան անվտանգութեան, քաղաքական անվտանգութեան եւ մնացած բոլոր խնդիրներով՝ քորուփցիայի դէմ պայքարի, քորուփցիոն գործերի քննութեան որակի եւ գործունէութեան հետ կապուած: Այդ հարցերը պէտք է լուծենք»:

Վարչապետը նկատած է, որ երկու տարին բաւարար ժամանակ էր, որպէսզի ԱԱԾ-ի բոլոր աշխատակիցները դիրքաւորուին ոչ բռնի, թաւշեայ եւ ժողովրդական յեղափոխութեան, այսինքն՝ ժողովուրդի իշխանութեան եւ անոր արժէքներու նկատմամբ: Հիմա պէտք է ամփոփել, թէ տրուած հնարաւորութիւնը ով ինչպէս օգտագործած է, եւ այս առումով պէտք է տրուին շատ յստակ պատասխաններ. «2018 թուականին ՀՀ վարչապետի պաշտօնն ստանձնելով՝ ինձ համար կարեւորագոյն խնդիր է եղել յատկապէս այնպիսի կառուցներում, ինչպիսին ԱԱԾ-ն է, ուժային մարմիններն են, ապահովել համակարգերի կայունութիւնը, շանել անկանոն գործողութիւններ եւ շարժումներ եւ ստեղծել հնարաւորութիւններ, որպէսզի բոլորը, ովքեր ունեն դրա մղումը եւ ձգտումը, յարմարուեն եւ դիրքաւորուեն նոր իրողութիւններին նկատմամբ: Եւ հիմա, ինչպէս ասում են, եկել է արդիւնքներն ամփոփելու ժամանակը»:

Հայաստան Քուէարկութիւն Պահանջած է Թուրք Թեկնածուն ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլէայի Նստաշրջանի Նախագահ Հաստատելու Հարցով

ՄԱԿ-ի անդամ 193 երկիրները յառաջիկային պէտք է ընտրեն Ընդհանուր ժողովի հերթական՝ 75-րդ նստաշրջանի նախագահը: Նստաշրջանը աշխատանքները պիտի սկսի յառաջիկայ Սեպտեմբերին: Նախագահի պաշտօնին համար միայն մէկ թեկնածու կայ, Թուրքիոյ փորձառու դիւանագէտ եւ քաղաքական գործիչ Վոլքան Պոզքիրը: Անոր անունը նախապէս ուղարկուած է ՄԱԿ-ի անդամ բոլոր երկիրներուն, միաձայն աջակցութիւն ստանալու համար, սակայն շարք մը երկիրներ քուէարկութիւն պահանջած են: Քանի որ գործընթացը հրապարակային չէ, դիւանագէտները առանց բացայայտելու իրենց անունները, «Ատշիեյթրտ Փրես»-ին երեք երկիր նշած են, որոնք քուէարկութիւն կը պահանջեն՝ Հայաստան, Յունաստան եւ Կիպրոս:

ՄԱԿ-ի Նոր Նախաձեռնութիւնը Հայաստանի Մէջ Covid-19-էն Տուժած Բնակչութեան Աջակցելու Համար

ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակը, 1 միլիոն տոլար հաւաքագրած է ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարի՝ «Վերականգնուելու աւելի ուժեղ» հիմնադրամէն Հայաստանի մէջ «Քորոնա» ժահրի ընկերատնտեսական հետեւանքները լուծելու համար, օգտագործելով առկայ բազմոլորտային արձագանգը: Այս մասին կը յայտնէ ՄԱԿ-ի համաշխարհային հաղորդակցութիւններու վարչութիւնը:

Ծրագիրը նպատակ ունի աջակցիլ Հայաստանի կառավարութեան եւ հայ ժողովուրդին, յատկապէս արձագանգելով Հայաստանի մէջ առաւել խոցելի բնակչութեան կարիքներուն, ներառեալ՝ հաշմանդամութիւն ունեցող երեխաներու ընտանիքներուն, միացակ մայրերուն, մեծահասակներուն, ընտանեկան բռնութիւն վերապրած անձանց, առաջնագիծ աշխատողներուն, տեղահանուած մարդոց եւ աշխատանքային գաղթականներուն, ինչպէս նաեւ համավարակէն տուժած փոքր ձեռնարկատիրութիւններուն:

«ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակի անձնակազմը ջանք չի խնայել մշակելու արդիւնաւէտ համագործակցութիւն, որ կ'օգնէ ամբարանելու Հայաստանի կառավարութեան կարողութիւնները եւ ուղղակիորէն կ'արձագանքէ ՔՈՎԻԴ-19-ի ազդեցութեան հանդէպ առաւել խոցելի խումբերու եւ համայնքներու խնդիրներուն, համոզուելով, որ որեւէ մէկը չհատենուի», - Covid-19-ի արձագանքի



ՄԱԿ-ի Հայաստանեան գրասենեակի համակարգող Շոմայի Շարփ

շուրջ Հայաստանի մէջ ՄԱԿ-ի անձնակազմի եւ կառավարութեան քննարկման ժամանակ ըսած է Շոմայի Շարփը:

«Կառավարութեան անունից շնորհակալութիւն եմ յայտնում ՄԱԿ-ին՝ այս դժուար պահին Հայաստանի կողքին լինելու համար, ինչպէս նաեւ բարձր եմ գնահատում ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակի հետ ստեղծուած կառուցողական համագործակցութիւնը: Բոլորիս նպատակը մէկն է՝ արդիւնաւէտ կերպով պայքարել համավարակի դէմ եւ հնարաւորինս մեղմել դրա ընկերատնտեսական հետեւանքները», - ընդգծած է փոխվարչապետ Մհեր Գրիգորեան:

105 Տարիներ Ետք՝ Քսաններուն Պատգամը

Շարունակուած էջ 1-էն

Եղեռնէն ու Քսան Կախաղաններէն երեք տարիներ ետք Արարատի փէշերուն հիմը դրուեցաւ Հայաստանի պետականութեան, որ անցնելով տարբեր հանգրուաններ մինչեւ օրս կը գոյատեւէ, աշխարհացրի Հայութեան հայեացքը սեւերելով իր վրայ: Այսօրուայ Հայաստանի Հանրապետութիւնը Քսաններուն եւ մեր ժողովուրդի երազներու մասնակի իրականացումն է: Ժողովրդավարութեան, հաւասարութեան ու ընկերային արդարութեան ամրապնդումը կը մնան գե-րմպատակներ, որոնց իրականացման ճամբուն վրայ մեր Հայրենիքը կը հանդիպի բազում դժուարութիւններու, սակայն անոնց յաղթահարման ուղղութեամբ կը նշմարուին շօշափելի ու յուսադրիչ քայլեր:

Խորհրդային համակարգէն դէպի դրամատիրական անցումը եղաւ խիստ դաժան մեր ժողովուրդին համար: Վերացաւ միջին դասակարգը ու յառաջ եկաւ փոքրաթիւ հարուստներու ընտրեալ խաւ մը, որու կողքին առօրեայ գոյութեան պայքար կը մղէ աղքատ մեծամասնութիւնը: Քսաններուն կուսակցութիւնը՝ ՍԴԿԿ-ն որպէս ժողովրդավարութեան ու ընկերավարութեան սկզբունքներուն հաւատացող ու անոնց արժէքները կրող կազմակերպութիւն, պարտաւորութիւնը ունի ստանձնելու իր ուրոյն տեղը Հայաստանի քաղաքական թատերաբեմին վրայ, ձերբազատելու համար կոշտ դրամատիրութեան յոռի փառքերէն ու կառուցելու ընկերային արդարութեան հիմունքներուն վրայ ամրակայուն օրինակելի պետութիւն, որպէս միակ երաշխիք մեր երկրի ապագայ զարգացման ու բարգաւաճման:

Իրենց նահատակութենէն 105 տարիներ ետք, Քսաններուն գաղափարախօսութիւնը ունի նաեւ իր հետեւորդները նոյնիմքն Թուրքիոյ մէջ: Վերջին տարիներուն Քսաններուն մասին գրականութիւն եւ վաւերագրական ֆիլմեր կը տարածուին այն հողին վրայ, ուր պայքարեցան անոնք, ո'չ միայն Հայութեան, այլ միւս ժողովուրդներու իրաւունքներուն համար եւս: Այդ հետեւորդները քաջութիւնը ունեցան, մի քանի տարի առաջ Քսաններուն յիշատակը պանծացնելու Պոլսոյ նոյն այդ հրապարակին վրայ, ուր ճօճեցան անոնց մարմինները:

105 տարիներ ետք դարձեալ կը խոնարհինք Փարամազի, Վանիկի, Տօթթ. Պեննէի, Աչըքպաշեանի, Թովմասեանի եւ միւս հերոսներու անմահ յիշատակին առջեւ, հաւատարիմ մնալով Քսաններուն կտակին, մինչեւ լրումը անոնց տեսլականին ու իրականացումը մեր ժողովուրդի բոլոր երազներուն ու ձգտումներուն:

ՀԿԲՄ Կը Շարունակէ Բարեսիրական Աշխատանքները



Ամերիկայի ամբողջ տարածքին մեծ ու փոքր բարեսիրական կազմակերպութիւններ կը շարունակեն օժանդակութիւն հասցնել «Քորոնա» ժահրի պատճառաւ տուժած քաղաքացիներուն:

Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը (ՀԿԲՄ) կը շարունակէ իր մասնակցութիւնը բերել այս աշխատանքներուն՝ սնունդ բաշխելով Լոս Անճելըսի տարբեր շրջաններէն ներս:

Շաբաթ, Յունիս 6-ին սնունդ բաշխութեան հերթական արշաւը տեղի ունեցաւ Վէն Նայսի եւ Փասատինայի մէջ:

Վէն Նայսի մէջ բաշխումը տեղի ունեցաւ Ս. Պետրոս եկեղեցւոյ շրջափակէն ներս: Այս աշխատանքը

իրականացաւ ՄԴՀԿ «Սպաս Գիւլ» մասնաճիւղի անդամներու գործնական մասնակցութեամբ:

Փասատինայի մէջ նոյն աշխատանքը կատարուեցաւ ՀԿԲՄ-ի կեդրոնին առջեւ, ՄԴՀԿ «Փարամազ» մասնաճիւղի մասնակցութեամբ:

Երկու շրջաններէն ներս ալ հարիւրաւոր հայ եւ տեղացի կարիւրները ստացան սնունդ պարունակող սնտուկներ, որոնք կամաւորներու կողմէ գետեղուեցան իւրաքանչիւրի ինքնաշարժին մէջ՝ պահելու համար առողջապահութեան կանոնները:

ՀԿԲՄ կը ծրագրէ հետագային շարունակել բարեսիրական այս աշխատանքները:

Հայաստանի Մէջ Տեղի Ունեցաւ

Շարունակուած էջ 1-էն

ԱԱԾ-ի տնօրէն նշանակուած էր ընդամենը երեքուկէս ամիս առաջ՝ Մարտ 19-ին, իսկ մինչեւ այդ, նախորդ տարուայ Սեպտեմբերին նշանակուած էր ԱԱԾ-ի տնօրէնի պաշտօնակատար, երբ նախկին տնօրէն Արթուր Վանեցեան սկանտալով թողեց այդ պաշտօնը:

Գնդապետ Արման Սարգսեան նոյն օրը նշանակուած էր ոստիկանապետ, մինչ այդ, դարձեալ, անցեալ տարուայ Սեպտեմբերէն ոստիկանութեան պետի պաշտօնակատարն էր՝ Վալերի Օսիպեանի պաշտօնակալութենէ յետոյ:

Ինչ կը վերաբերի Գլխաւոր շտաբի (հրամանատարութեան) պետին, սպա Արտակ Դաւթեան խայտառակութեան մը կիզակէտը յայտնուած էր շաբաթավերջին, որդւոյն հարսանեաց հանդէսին պատճառով:

«Հրապարակ» օրաթերթի հրապարակած տեղեկութեան համաձայն, կայացած է Արտակ Դաւթեանի որդւոյն հարսանեաց

հանդէսը, պաշտպանութեան նախարարութեան կեդրոնական մասնաշէնքէն ոչ հեռու գտնուող իր շքեղ առանձնատան մէջ, ուր ներկայ եղած են նաեւ ռազմական գերատեսչութեան բարձրաստիճան ներկայացուցիչներ. անոնց սպասարկող պաշտպանութեան նախարարութեան պետական համարանիշներով ինքնաշարժները կայանուած էին Արտակ Դաւթեանի առանձնատան մօտ:

Զօրավար Արտակ Դաւթեան չէ հերքած, որ «Քորոնա» ժահրի պայմաններուն, որդւոյն հարսանեաց հանդէսը կազմակերպած է: «Օրէնքի առաջ բոլորն են հաւասար, եւ եթէ ես որեւէ խախտում եմ արել, կը կրեմ դրանից բխող պատասխանատուութիւնը: Ի հարկէ, ըստ իս, խախտում չի եղել, բայց թող դա պարզեն համապատասխան մարմինները: Պարզապէս ուզում եմ յիշեցնել՝ բոլորն ունեն անձնական կեանքի իրաւունք: Յորդորում եմ որոշ մարդկանց, լրատուամիջոցների չմտնել իմ եւ իմ

Թուրքիոյ Միակ Հայկական Գիւղին՝ Վաքըֆլըի Մէջ, Մուսա Լերան Թանգարան Բացուած է



Թուրքիոյ Հաթայ նահանգին մէջ գտնուող միակ հայաբնակ գիւղին՝ թաղամասի կարգավիճակ ունեցող Վաքըֆլըին մէջ, Մուսա լերան թանգարան բացուած է:

Վաքըֆլը գիւղի Հայ Առաքելական եկեղեցւոյ հիմնադրամի նախագահ՝ ձեմ Չափարը «Տողան» լրատուական գործակալութեան պատմած է, որ կնոջ՝ լրագրող Լորա Չափարի հետ միասին երկար ժամանակ աշխատած են թանգարանի ստեղծման ուղղութեամբ, եւ երախտագիտութիւն յայտնած է Հաթայի նահանգապետ Ռահմի Տողանին, նախագիծին աջակցելուն համար:

Չափարը նշած է, որ թանգարանին մէջ ներկայացուած է ոչ միայն հայկական մշակոյթի, այլ նաեւ Անատոլիայի բոլոր ժողովուրդներու մշակութային ներկայանակը:

ընտանիքի անձնական տարածք եւ փորձ ձանել ինձ ներառել քաղաքական խաղերի մէջ»:

Արտակ Դաւթեան Զինուած ուժերու Գլխաւոր շտաբի պետ

թանգարանի ձեւաւորման համար օգտագործուած են գիւղի բնակիչներուն տրամադրած իրերը. ցուցադրուած են աւանդական տարազներ, պատմական իրեր, զարդեր, պատառներուն վրայ կարելի է տեսնել մուսալեռացիներու աւանդոյթներուն մասին պատմող հոլովակներ:

«Աշխատանքները արդէն աւարտած էինք, սակայն համաճարակի պատճառով թանգարանի բացումը չկարողացանք կատարել: Իրավիճակի կարգաւորման հետ մէկտեղ, թանգարանը ալ արդէն բաց է այցելուներու համար: Առաջիկային պաշտօնական բացում ալ կ'ընենք», - ըսած է ձեմ Չափարը:

Շուրջ 130 հայ բնակիչ ունեցող Վաքըֆլը կը գտնուի Հաթայ նահանգի Սամանդաղ շրջանի, Մուսա լերան լանջերուն վրայ:

նշանակուած էր թաւշեայ յեղափոխութենէն յետոյ, 2018 թուականի Մայիս 24-ին, մինչ այդ 5-րդ բանակային գորամիւտորման հրամանատարն էր:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
 ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈՔԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Հնչակեան Հայ Յեղափոխական Ու Թուրք Ընկերվարականի Գիրքը

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿԵԱՆ


Այժմ՝ հարիւր տարի անց, դժուար է հաւատալ, երեւակայել անգամ, որ 1915 թուականի Մեծ եղեռնը չէ՞ր լինելու, միլիոնաւոր մեր հայրենակիցները չէ՞ին նահատակուելու, Արեւմտահայաստանը չէ՞ր հայաթափուելու, եթե...

1913 թուականի Սեպտեմբերի 7-ին, ռուսինական կոստանցա քաղաքում տեղի ունեցաւ Հնչակեան կուսակցութեան պատգամաւորական ժողովը, որի պատուիրակները, կանխազգալով համազգային նախճիրի վերահաս վտանգը, որոշեցին բռնասպանութեամբ վերացնել նախճիրը յղացողներին եւ այն իրագործել ձգտողներին՝ Թալեաթին, էնվէրին, Ջեմալին: Այդ վճռականութեամբ համակուած՝ համագումարի պատգամաւորները Պոլիս վերադարձան, զէնք-զինամթերք հայթայթեցին, անգամ կոմկապից դիպուկահարներ հրաւիրեցին: Վերջին պահին, սակայն, երբ նուիրական նպատակի իրականացումը այնքան մօտ էր թւում, մատնուեցին: Թուրքիայի ռազմական ատենանք քսան ամենակարկառուն Հնչակեաններին մահուան դատապարտեց, 1915 թուականի Յունիսի 15-ին Պոլսի Բայազիդ հրապարակում կախաղանահանեց...

Թուրք ժողովրդավար ընկերվարական Քաղիւր Աքինը, որը Ստամբուլից Երեւան է ժամանել Հնչակեան քսան յեղափոխականների նահատակութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջազգային գիտաժողովին մասնակցելու՝ գեկուցմամբ հանդէս գալու համար, ասում է.

- Մանկութեանս տարիներին ես ֆուտբոլ եմ խաղացել Բայազիդ հրապարակում ու մտքովս էլ չեմ անցկացրել, որ այդ նոյն վայրում կախաղանի չվաններից ճօճուել են Փարամազն ու նրա 19 համախոհները: Երբ հասակ առայ, աններելի ուշացումով հասու եղայ մե՞ր իսկ անցեալի իրադարձութիւններին, մեղաւորութեան զգացումով համակուեցի Քսանների՝ յատկապէս Փարամազի նկատմամբ, որը դեռեւս Օսմանեան կայսրութիւնում արմատաւորել, տարածել է ժողովրդավարական գաղափարաստութիւնը, պայքարել ինչպէս հայ, այնպէս էլ թուրք, քուրդ, յոյն, ասորի բռնաճնշուած ժողովուրդների ազատագրութեան համար:

Փարամազը, նոյն ինքը՝ Մաթեոս Սարգսեանը, յեղափոխական գաղտնանուամբ ռոզոստոցի Համբարձում Գրիգորեանը, ծնուել էր 1863-ին, Գողթան գաւառի Մեղրի գիւղում, սովորել ծննդավայրի ծխականում, ուսանել էլձմիրածնի Գէորգեան ճեմարանում: 1883-ին ըմբոստ նկրտումների համար արտաքսուել էր ճեմարանից, 1897-ին ասպատախումբ էր կազմաւորել, տասներեք մեծ ու փոքր ճակատամարտերով մտել էր Վան, ձերբակալուել, մահուան էր դատապարտուել, Վանի ռուսական փոխհրապարտու Մաեակու միջնորդութեամբ փոխադրուել էր Կովկաս, որտեղ երեք տարուաչ բանտարգելութիւնից յետոյ ազատ էր արձակուել ու կազմակերպել էր փոխարքայ Գողթիցի մահափորձը: 1905-ին իր



ասպատախումբով մասնակցել էր հայթաթարական բախումներին, 1908-ին, Սահմանադրութեան հռչակումից յետոյ, վերադարձել էր Օսմանեան կայսրութիւն, քարոզարշաւ էր նախաձեռնել երկրի ղեկավարութիւնն ստանձնած «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան դէմ, հակակառավարական ելույթներով հանդէս էր եկել Վանում, Ատաբազարում, Դիարբեքիւրում, Հայնիում, Արդնի-մատենում, Մալաթիայում, Խարբերդում, ամէնուր երիտթուրքերին անուանել էր «Հայերի դահիճներ», 1914-ի Յունիսին, Թալեաթի, էնուերի, Ջեմալի դէմ մահափորձ կազմակերպելու, անկախ, ինքնավար Հայաստան ստեղծելու նպատակով վերադարձել էր Պոլիս: Ձերբակալուել, նպատակները չէր հասցրել իրագործել:

Փարամազը նաեւ գրող, հրապարակագիր էր, հեղինակել էր «Պաքոյ», «Քամու Բերածը Քամին Կտանէ», «Ձեռքերը Վեր Կամ ձուղուպրիստները» թատերգութիւնները, «Իմ Դատավարութիւնը Տաճկաստանում» պաշտպանաճառը, «Հայի Պահանջը», «Բարենորոգումները Հայաստանում» խոհագրութիւնները:

- Մենք՝ թուրք մտավորականներս անգամ, մեր ոչ վաղ անցեալի, յատկապէս հայերին առնչուող իրադարձութիւնները վատ գիտենք: Թուրքական Հանրապետութիւնը հիմնադրել էին յանցագործներ, որոնք սանձազերծել էին հայերի, յոյների, ասորիների, այլ ոչ իսլամ ժողովուրդների ցեղասպանութիւնը, այդ պատճառով էլ սերունդներից հետեւողականորէն քողարկում էին իրենց ոճիրները, աւելին՝ խռովարարութեան, դաւաճանութեան, անջատողականութեան մէջ մեղադրում էին իրենց զոհերին: Պատմական ճշմարտութիւնը բացայայտելու, իմ ժողովրդին իր իսկ անցեալի հետ առերեսուելու հնարաւորութիւն ընձեռելու համար ես, իմ համեստ կարողութեամբ, ձեռնամուխ եղայ Փարամազին նուիրուած գրքի հեղինակմանը, որը գրելիս, յատկապէս մեր երկրի կարծրատիպերը յղթահարելու առումով, ահռելի ջանքեր ներդրեցի ու վերջնական նպատակս իրականացրի: «Հայ Յեղափոխական Փարամազ» գիրքը լոյս տեսաւ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի սգահանդէսի օրերին:

Քաղիւր Աքինը, միայն Փարամազի գաղափարաստական ու մարտական գործունէութիւնը նկարագրելով, նրան, նրա մարտնչներներին «նաեւ մեր», այսինքն՝ թուրք ժողովրդի հերոսներին ներկայացնելով չի գոհացել, անդրադարձել է Աբդուլ Համիդի հայահալած քաղաքականութեանը, որպէս անմիջական հակադարձութիւն Սասունի, Ջեյթունի, Վանի ապստամբութիւններին, օսմանեան դրամատան բռնազրամանը, Ադանայի 1909-ի կոտորածին: Յատուկ ծաւալուն բաժիններ են նուիրուած Հնչակեան կուսակցութեան պատմութեանն ու գաղափարաբանութեանը, 1915-ի Յեղասպանութեանը:

հեղինակը, իր դրոյթները հիմնաւորելու համար, լայն տեղ է յատկացրել լուսանկարներին, վաւերագրերի պատճեններին, փաստական այլ բազմաբնոյթ նիւթերի:

«Հայ Յեղափոխական Փարամազ» գիրքն այս տարուաչ ապրիլին 1350 օրինակով լոյս է ընծայել Անկարայի հեղինակաւոր «Դիփնօթ» հրատարակչութիւնը: Տպաքանակը 20 օրում սպառուել է:

Երկրորդ իմ բաքանակը, դարձեալ 1350 օրինակ, սպառուել է մէկ ամսում: Շուտով հրատարակչը երրորդ անգամ լոյս կ'ընծայի գիրքը:

«Հայ Յեղափոխական Փարամազը» գրքի մասին դրուատական գրախօսականներ են տպագրել թուրքական «Թարաֆ», «Ռադիկալ», «Էվրասիա», «Բիրկիւն» օրաթերթերը, հեղինակի հետ հանդիպումներ են ունեցել Անկարայի, Ստամբուլի, Իզմիրի, Նիւրնբերգի, Բեռլինի, Փարիզի առաջադէմ թուրք ընթերցասէրները: Այնուամենայնիւ, նա իր ամենաբարձր գնահատականը համարում է Քոբանիում իսլամ ծայրահեղականների դէմ մարտնչող Սուլհի Նեժաթի՝ Փարամազ յեղափոխական անուամբ վերամկրտուելը: Ու չնայած մի քանի օր առաջ Սուլհիին զոհուել է, իշխանութիւնները որոշել են Փարամազ վերանուանել Միշթենուր լեռնապարը, որտեղ նա իր վերջին մարտն է մղել:

Քաղիւր Աքինի հետ զբօսնում ենք աղջամուղջում ընկրմուող Երեւանում, եւ նա նրբանկատօրէն չի հարցնում, թէ Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաքում որտե՞ղ է գտնուում Փարամազի յուշարձանը, նրա անուը կրող փողօցը, դպրոցը, թանգարանը: Փոխարէնը ես ուզում եմ իմանալ՝ ինչպէ՞ս է նա պատկերացնում հայթուրք ժողովուրդների ապագան: Ժողովրդավար ընկերվարականը ոգեւորում, համոզում պնդում է, որ արդարութիւնն ի վերջոյ յաղթանակելու է, թուրք, հայ, քուրդ ժողովուրդները այսօրուաչ թուրքի տարածքում իրենց անկախ պետականութիւններն են ստեղծելու, հաշտ ու համերաշխ համադաշնութիւնում են ապրելու:

Թէ ինչպէ՞ս է կոչուելու այդ նոր պետութիւնը, Քաղիւրը չի ասում: Գուցէ չի ուզում: «Գրական Թերթ» 2015

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the
2020 AEBU Scholarship Program
Empowering Our Youth for a Brighter Future

To apply, visit our website
WWW.AEBU.ORG

APPLY NOW
Through June 30, 2020

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626•344•7321
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

Massis Weekly

Volume 40, No. 22

Saturday, JUNE 13, 2020

Armenian Government Appoints New Army and Security Heads



YEREVAN — Prime Minister Nikol Pashinyan has dismissed the chief of staff of Armenian armed forces Artak Davtyan replacing him with Onik Gasparyan.

Pashinyan has also dismissed director of the National Security Service Eduard Martirosyan and chief of police Arman Sargsyan, replacing them with Argishti Kyaramyan and Vahe Ghazaryan respectively.

Pashinyan said in a Facebook post that his decisions will come into force after they are signed by the president.

Pashinyan thanked the dismissed officials for the work and the efforts they did during their tenures. The reasons for their dismissal were not indicated.

Pashinyan decisions come after media reports that Artak Davtyan cel-

ebrated a wedding of his son with dozens of guests despite the state of emergency that bans mass gatherings

Eduard Martirosyan was appointed as head of the National Security Service on March 19 of this year replacing Artur Vanetsyan. According to earlier media reports, Martirosyan tendered his resignation after the appointment of Argishti Kyaramyan as his first deputy.

Arman Sargsyan was appointed as head of the police on March 19 this year. In September 2019, after the resignation of Osipyan, Sargsyan was appointed interim head of the police.

Colonel Vahe Ghazaryan was appointed commander of the police forces, deputy chief of police on May 22, 2019. Prior to that, he held a

Continued on page 4

Armenia's Confirmed COVID-19 Cases Top 14,000 Death Toll Hits 227



YEREVAN — Armenia has reported 428 new cases of coronavirus on Tuesday, bringing the total to 14,103. Death toll has hit 227, another 77 patients with coronavirus have died because of other diseases.

According to the data of the National Center for Disease Control and Prevention, 775 patients have recovered on Tuesday, bringing the total to 5,226. The number of active cases is 8,573.

Prime Minister Nikol Pashinyan said today there were signs that the situation with coronavirus was stabilizing. Speaking at a press briefing after a recurrent meeting of a government task force, set up to enforce the

state of emergency declared to contain the spread of the infection, Pashinyan said coronavirus infection rates showed weak signs of stabilization.

"Of course, we cannot definitively state that our situation has stabilized, but there are first such signs," he said, adding that despite the signs of stabilization the infection rate is still high.

"However, I want to emphasize that thanks to the efforts of the task force, the ministry of health and the government, the stabilization, even with such high rate of infection is becoming tolerable for our health care system: de

Continued on page 4

Senator Menendez Requests Investigation of U.S. Assistance to Azerbaijan

WASHINGTON- Ranking Member of the US Foreign Relations Committee, Senator Menendez (D-N.J.) issued a statement on June 4, formally requesting that the Government Accountability Office (GAO) open a review of all U.S. aid provided to Azerbaijan in accordance with Section 907 of the Freedom Support Act.

US assistance to Azerbaijan has drastically increased in recent years, despite the regime's rampant cease fire violations and blockade against Nagorno Karabakh (Artsakh). Section 907, a law passed in 1992, bans most aid to Azerbaijan until considerable measures are taken to cease all blockades and use of force against Artsakh.

Senator Menendez's letter to Comptroller General Gene Darado of the GAO asks the independent agency, to assess the scope, nature and impact of the aid provided to the Azeri regime by the US government, in accordance to the Section 907 waiver. The Senator's intent is to determine whether any of the aid was utilized to attack Armenia and Artsakh and to assess the impact of any ongoing negotiations for a peace agreement be-



tween Armenia and Azerbaijan.

In the letter, the Senator wrote: "Those memoranda [of justification for providing the waiver] gave no indication that the Administration has conducted a comprehensive assessment of whether assistance provided to the Government of Azerbaijan pursuant to the waiver has avoided the negative impacts mentioned in the certification, or an evaluation of any other impact from said assistance."

Continued on page 4

ACA Statement on Nationwide Protests

LOS ANGELES – The Armenian Council of America issued a statement on the nationwide protests against racism and police misconduct. The statement is as follows"

The murder of George Floyd by four police officers in Minneapolis has unleashed a massive protest movement across the country. These protests are releasing years of pent-up frustration with racism and inequality.

As Armenian-Americans, we condemn racism in all its manifestations. We know that racism unopposed, leads to crimes against humanity. Our ancestors, who survived unhindered authoritarian rule, fused with racism resulting in the Armenian Genocide, prove that authority should always be checked and regulated by the people and that racism should be fought and stamped out at all costs.

Many have said that we need to have a conversation about racism. The Armenian Council of America believes that a conversation about racism alone is not enough. What is needed is bold action by local, State, and Federal governments to deal with the plague of institutional racism that has wormed its way into our nation.

That is why we as Armenian-Americans, cannot stand by silently, while our friends in the African-American community are continually targeted, harassed and persecuted by the forces of racism. The Armenian Council of America stands by the message of the Black Lives Matter movement and asks that protests continue in a peaceful manner to ensure that this vital message is received and acted upon. We also call for all members of the community to have their voices heard within the democratic process. Please contact your elected officials at all levels of government and be sure to vote in the upcoming elections.

The Armenian Council of America is committed to promote the civic and civil rights interests of the Armenian American community, and to champion the causes and concerns of the Armenian-American community within local, state, and federal governments.



U.S. Approves More Coronavirus Aid To Armenia

YEREVAN (RFE/RL) — The United States has allocated \$5.4 million in fresh assistance to Armenia designed to combat the coronavirus epidemic, U.S. Ambassador Lynne Tracy said on Thursday.

In an interview with RFE/RL's Armenian service, Tracy also voiced concern over the growing number of coronavirus cases in the country while praising the Armenian government's intensifying efforts to get people to practice social distancing, wear face masks and wash hands.

"Those are things that all of us can do and that I think can help turn around the situation we're seeing right now," she said. "Obviously these high numbers that we are seeing now are of concern, but it's really the effort of all of us, a unified effort, that I think is going to make a difference in fighting COVID-19."

"I'm also happy to say that the United States has been doing its best to contribute and assist the government," Tracy went on. "We have obtained \$5.4 million of new assistance money that's going in a number of directions to help the government. We are also redirecting some of our existing money to help small and medium businesses.

"So I have still some optimism that we can recover and be in a better place. But it's going to take a lot of work, I think, from everybody."

In the envoy's words, much of the fresh U.S. assistance will be channeled into Armenian laboratories and healthcare services dealing with "the most severe cases" of COVID-19. "We are continuing to talk to the [Armenian] government about the needs that they have, and we are looking at what we have within the U.S. capacity



to help," she said.

Washington announced its first coronavirus-related aid package for Armenia, worth \$1.1 million, in late March shortly after the Armenian government imposed a nationwide lockdown to contain the first major outbreaks of the disease.

The government began easing those restrictions in mid-April and lifted virtually all of them by the beginning of May. The number of coronavirus cases in the country has increased sharply since then. Critics say that the government never properly enforced the lockdown and ended it too soon.

Asked to commenting on that criticism, Tracy said: "The prime minister [Nikol Pashinian] has been talking about some of the issues that he's been trying to balance, trying to balance protecting public health while also paying attention to the fundamentals of the economy. It's a tough balance to strike."

"This is something that we are facing in the United States as well and in many places around the world," she said.

Alexis Ohanian Resigns from Reddit Board, Urges Seat Be Filled by Black Candidate



NEW YORK — Armenian-American Internet entrepreneur Alexis Ohanian, co-founder of Reddit, announced his resignation from the company's board Friday afternoon. In the video posted on his Instagram and Twitter accounts, the 37-year-old said doing the right thing was long overdue.

Ohanian, the husband of tennis superstar Serena Williams, revealed he had urged Reddit board to fill his seat with a black candidate and vowed to use future Reddit stock to serve the black community, specifically to curb racial hate.

"I co-founded Reddit 15 years ago to help people find community and a sense of belonging," Ohanian said both in tweets and a video he posted online. "It is long overdue to do the right thing. I'm doing this for me, for my family, and for my country. I'm saying this as a father who needs to be able to answer his black daughter when

she asks: 'What did you do?'"

"I believe resignation can actually be an act of leadership from people in power right now," he said. "To everyone fighting to fix our broken nation: do not stop."

Reddit said it would honor Ohanian's request. "I want to take responsibility for the history of our policies over the years that got us here, and we still have work to do," Reddit CEO and cofounder Steve Huffman wrote on Reddit.

Ohanian also pledged \$1 million to Colin Kaepernick's Know Your Rights Camp Legal Defense Initiative. The organization looks to "advance the liberation and well-being of Black and Brown communities through education, self-empowerment, mass-mobilization and the creation of new systems that elevate the next generation of change leaders," according to its website.

Ex-President's Son-In-Law Faces More Charges

YEREVAN -- Four days after Armenia's Court of Appeals revoked an arrest warrant issued for Mikael Minasyan, investigators said on Monday that they have broadened corruption charges brought against former President Serzh Sarkisian's fugitive son-in-law.

The State Revenue Committee (SRC) said Minasyan has been charged with more counts of "illegal enrichment," false asset disclosure and money laundering. It claimed to have collected an "unprecedented" amount of information about his dubious financial activities.

Minasyan was first indicted in March one month before the SRC moved to arrest him. A district court in Yerevan agreed to issue an arrest warrant for him on May 6. However, the Court of Appeals overturned that decision on Thursday.

One of Minasyan's lawyers, Amram Makinyan, scoffed at the investigators' decision to bring more and "equally baseless" charges against Armenia's former ambassador to the Vatican. He said that Prime Minister Nikol Pashinyan could not come to terms with the Court of Appeals ruling.

Makinyan said earlier that the



money laundering charge stems from large sums of cash which Minasyan transferred from one of his bank accounts to another in 2017-2018. The lawyer also claimed that the other accusations are based on a "technical error" committed by the employee of a private firm which drew up and filed his client's income declarations.

In a statement released on Monday, the SRC charged that Minasyan had also failed to declare his "de facto" ownership of a 49 percent stake in Armenia's largest food-exporting company, Spayka. The stake formally be-

Armenia's State Revenue Committee Chairman Resigns

YEREVAN (RFE/RL) — Davit Ananyan, the head of Armenia's State Revenue Committee (SRC), unexpectedly resigned on Thursday.

Ananyan gave no reasons for the resignation when he announced it on Facebook.

"In order to end rumors circulating in the media I want to inform that today I tendered my resignation to the prime minister of Armenia," he wrote.

"I want to thank everyone for effective and production cooperation and Prime Minister Nikol Pashinyan for entrusting this important position to me for more than two years," he added without elaborating.

Pashinyan did not immediately accept the resignation or make statements on it.

Ananyan, 48, was appointed

as head of the national tax and customs services in May 2018 shortly after the "Velvet Revolution" that brought Pashinyan to power. He served as deputy finance minister in Armenia's previous government. Former Prime Minister Karen Karapetyan had appointed him to that post in 2016.

According to his official biography, Ananyan, 46, worked as a tax inspector in the 1990s and ran a private tax and accounting consultancy from 2006-2016.

Ananyan promised a tougher government crackdown on companies and individuals evading taxes when he took over the SRC. The current government's tax revenues have risen significantly since then, a fact regularly emphasized by Pashinyan.

Hakobyan refused to say how he gained access to the supposedly classified SRC data when he was contacted by RFE/RL's Armenian service.

Minasyan, 42, enjoyed considerable political and economic influence in Armenia when it was ruled by his father-in-law from 2008-2018. He is also thought to have developed extensive business interests in various sectors of the Armenian economy.

Minasian fled Armenia shortly after he was dismissed as ambassador to the Vatican in late 2018.

longed to another person, Roza Stepanyan. She too has been indicted as part of the same criminal case, according to the statement.

In a related development, Hrachya Hakobyan, a pro-government lawmaker and Pashinian's brother-in-law, said that investigators have recovered thousands of deleted files from a computer that belonged to Minasyan. He claimed that the files contain detailed information about Minasyan's financial transactions and illegally acquired assets.

A Message to Our Community in Support of Equality, Dignity, and Justice

We hold these truths to be self-evident, that all men are created equal, that they are endowed by their Creator with certain unalienable Rights, that among these are Life, Liberty and the pursuit of Happiness.

Declaration of Independence, July 4, 1776

BY VARTAN GREGORIAN

The principles of the Declaration of Independence are embodied in the U.S. Constitution, the covenant that unites us as a nation and defends the pillars of our democracy: equal rights, equal justice, and equal opportunity — rights and protections that must be afforded to all citizens regardless of race, gender, or creed.

Some two-and-a-half centuries later, we are still failing to uphold these foundational principles for all. The killing of George Floyd has caused grief, anger, and fear, but also feelings of revulsion toward this latest manifestation of the country's shameful legacy of racism. At this history-shaping moment, we seek to affirm racial and social justice as more than slogans or lofty aspirations; rather they must become the agenda of our nation, one that requires the full support of every American, from every background.

This latest atrocity moves us to be more vigilant in making sure that Carnegie Corporation of New York adheres to its mission and accomplishes its goals. We value education as the bedrock of our democracy. We believe in our historical role and moral obligation to provide all children with equal opportunities to learn, to succeed, and to obtain higher education. We value civic participation as the defender of a strong democracy. We believe that all Americans must be able to exercise their right to vote and engage in the democratic process. We support the rights of individuals and groups to make their voices heard in order to confront ignorance, injustice, and the systemic racism that has brought us to this point.

We are reckoning with the fact



that justice delayed is justice denied, and we salute those institutions working to reform the law enforcement, criminal justice, and judicial systems that have discriminated against black Americans. Our immediate priorities include collaborating with our philanthropic peers to expose and end the long line of injustices against people of color and their communities. By working toward solutions, we seek to further the democratic ideals of our founder, Andrew Carnegie.

More than a century ago, Carnegie reflected on many of these fraught issues in his book *Triumphant Democracy*, writing that one person's right is every person's right: "The flag is the guarantor and symbol of equality." This is the time to reflect on our values and beliefs. This is the time to uphold the Constitutional rights of all people by pursuing equality, fairness, and justice. This is the time to demonstrate that Black Lives Matter.

Vartan Gregorian is the President, Carnegie Corporation of New York

Turkish Singer Sued for Insulting Armenians in a Post Addressed to Kim Kardashian

ISTANBUL - Turkish singer Murat Övüç who called TV personality and entrepreneur Kim Kardashian a "nasty Armenian," has been sued, Ermenihaber.am reports.

Armenian Attorney Simon Çekem filed a criminal complaint against Övüç at the Istanbul Chief Public Prosecutor's

Office for insulting Armenians in a post addressed to Kim Kardashian.

Övüç is accused of inciting discrimination, hatred and hostility.

Murat Övüç comments came after Kim Kardashian shared tribute to Armenian Genocide victims on April 24, 2020.



"Today is the 105th anniversary of the Armenian genocide and I'm so proud that America has recognized this," Kim said on social media.

She then shared a 12-panel story on Instagram to educate her 167 million followers on Armenian Genocide.

In response Övüç wrote: "You

Turkey's First Armenian Museum Opens in Vakifli Village, Musa Dagh



VAKIFLI, MUSA DAGH — Turkey's first Armenian museum has been established in Vakifli, only Armenian village in Musa Dagh.

said, "This museum has traces not only from the Armenian culture but also from the culture of all the peoples living in Anatolia."



"We could not make the opening because of the coronavirus outbreak. As we have now entered the normalization phase, we are now opening the museum to visitors. We will make our official opening in the coming days," said Cem Capar, the chairman of Vakifli Village Armenian Orthodox Church Foundation.

Vakifli village, which is a natural continuation of the Hidirbey Valley on the foothills of Musa Dagh, overlooking the Mediterranean Sea and located 30 kilometers from the Yayladagi-Syria border, is known for being the only village of the dwindling community in the country and still maintains Armenian life and culture.



Stating that they have been working for the establishment of the Musa Dagh Museum for a long time, Capar

Local clothes, historical items and jewelry are exhibited in the Museum.

Armenians are nasty. Who are you to call my Ottoman elders barbarians?"

"I gave the answer because she was speaking in a way that would humiliate our values," he said in a statement to the Prosecutor's Office.

He insisted that the words were

not addressed to Armenian citizens of Turkey and noted he had been helping Armenian associations in the past 5-6 years.

"I do not accept the charges," the singer told prosecutors before leaving the courthouse with his lawyer.

End of the School Year at UWC Dilijan: University Placements and Other Achievements

DILIJAN — The 2019/20 academic year for UWC Dilijan has been, by all accounts, like no other. In October the college marked its 5th Anniversary. With the spread of COVID-19, UWC Dilijan had to switch to an online model of teaching the IB curriculum, as most of the students had to travel back to their home countries. UWC Dilijan, with its international student and staff body, its international board, has had its values tested while adapting to the new reality.

Following the tradition of gathering at the end of every academic year, the UWC Dilijan community got together once again before saying goodbye for the summer. Watch the recording of UWC Dilijan's virtual Year-End Global Gathering to hear some inspiring stories from students, alumni and supporters of the college.

Class of 2020 university results:

Out of 109 students of the class of 2020, 87 have been admitted to universities, 18 are taking a gap year and 4 students are awaiting university offers. The number of university acceptances this year is 294, while the total number of universities is 105.

Top universities this year:

USA: Harvard, Brown, Duke, Stanford, Northwestern Universities, University of Chicago; Wellesley, Middlebury, Davidson Colleges

Canada: the University of British Columbia, University of Toronto


UK: University College London, King's College London, the University of Edinburgh



The Netherlands: Leiden and Utrecht Universities, University of Amsterdam

Singapore: Yale-NUS College

UAE: NYU Abu Dhabi



Universities by geography:

Geographically, 45% of universities that accepted UWC Dilijan students are located in the USA, 28% – in the UK. Among other top countries are the Netherlands (8%), France (4%), Germany and Canada (2%).

Many UWC graduates become Davis Scholars, attending one of the 99 partner institutions in the USA via the Shelby Davis scholarship program. This year UWC Dilijan has 60 Shelby

Davis Scholars.

“Founded in 2014, UWC Dilijan has been demonstrating resilience because of its vibrant community of students, staff, parents, supporters and friends, and in spite of the current challenges, it is in a position to arise stronger from the crisis. Bringing young people together to build international understanding is taking a new meaning in this new reality. Let us ensure that the barriers imposed by COVID-19 will not diminish our resolve to work towards a more peaceful and equitable world,” says Gabriel Ernesto Abad Fernandez, Head of College.

“The crisis affects us all, but our personal response to it contributes to how the situation unfolds and what we are as individuals, societies and communities. To this end, the response to this crisis by the school, students, staff, parents, Board and our generous supporters has been beyond my expectations. I feel that as a community we have been standing shoulder to

shoulder,” says Veronika Zonabend, the Chair of the Board and co-founder of UWC Dilijan.

About UWC Dilijan

UWC Dilijan is the first international boarding school of the UWC education model in the region. The college opened in 2014 in the Armenian town of Dilijan and currently has 226 students enrolled from more than 80 countries and 36 academic staff members from 15 countries.

UWC Dilijan represents an exciting extension of the UWC movement into the Caucasus region at the junction of Asia and Europe. Established in 1962, the UWC educational movement now comprises 18 international schools and colleges, national committees in more than 155 countries, and a series of short educational programs.

UWC Dilijan was initiated and masterminded by impact investors and entrepreneurs Ruben Vardanyan and Veronika Zonabend with the support of other Founding Patrons. The college was built with generous donations from over 330 benefactors. Its admissions policy aims to make enrollment available to anyone, regardless of socio-economic background, on the basis of demonstrated need. Over 80% of students receive full or partial scholarships.

The UWC Dilijan academic program – The International Baccalaureate (IB) Diploma Programme (DP) – is an assessed program for students aged 16 to 19.

UWC Dilijan has five generations of alumni from 2016 to 2020; many of them continue their education at leading universities worldwide – Princeton, Yale, Harvard, Columbia, UCL, Duke, Berkeley, McGill, University of Edinburgh, Minerva School at KGI and many more.

Armenian Government Appoints

Continued from page 1

number of posts in the police.

Artak Davtyan was appointed as head of the General Staff on May 24, 2018. Onik Gasparyan was appointed deputy chief of the General Staff of the Armed Forces on July 7, 2016.

Pashinyan commented on the sackings when he chaired in the evening a meeting of senior government officials dealing with the coronavirus epidemic. Sargsyan and Martirosyan were also present at the meeting.

“It's high-ranking state officials that must first and foremost demonstrate with their actions the impor-

ance of following anti-epidemic rules,” said Pashinyan. “Unfortunately, we see cases where that does not happen.”

At an ensuing news briefing, Pashinyan effectively confirmed that Davtyan was fired because of hosting on Sunday his son's wedding party despite the state of emergency. He also seemed to fault the police and NSS chiefs for not preventing the wedding.

“In crisis situations things get to a point where discipline, order and precise and unconditional execution of actions stemming from the country leader's statements take precedence over all other issues,” he said in that context.

Senator Menendez Requests Investigation

Continued from page 1

Senator Menendez further stated: “Understanding the impact of assistance provided pursuant to the waiver is a prerequisite to evaluating whether it benefits U.S. national security and foreign policy interests or represents a prudent use of U.S. taxpayer dollars. This lack of information presents a serious challenge to the Senate Foreign Relations Committee's ability to conduct oversight of U.S. assistance to the Government of Azerbaijan.”

In addition, Senator Menendez requested that the GAO begin their work

immediately and provide the Senate Foreign Relations Committee with regular updates, including any roadblocks or challenges they potentially face.

“Senator Menendez's request for the GAO's investigation into the Azeri regime's exploitation of American taxpayer dollars in the form of US aid is commendable,” said ACA Chairman Sevak Khatchadorian.

“The Armenian American community applauds the Senator for his patriotism, dedication to democracy and respect for the law and its virtues. The Azeri dictatorship has violated US

Armenia's Confirmed COVID-19 Cases

Continued from page 1

facto, we see that with every day there are fewer problems with citizens who need hospitalization,” said Pashinyan.

The prime minister noted that if this trend is maintained, then, firstly, the problems of hospitalization will be completely resolved, and, secondly, the country will proceed to the stage of defeating the virus.

He again pointed out that the main instrument of the struggle remains compliance with the rules established by the task force.

Pashinyan also said that the price of a mask has dropped to 80 drams, although some pharmacies sell them at 150-200 drams.

“I want to say that today citizens can buy masks from vending machines for 100 drams, but will need to buy two masks, paying 200 drams,” the head of government said.

The Prime Minister recalled that Armenia is one of the few countries, which are going through the pandemic

without tangible inflationary phenomena.

“Armenia is one of the few countries where food shortages have not been recorded,” Pashinyan said in all public places.

Minister of Emergency Situations Felix Tsolakyan said on Tuesday that the ministry has been involved in the struggle against the spread of coronavirus from the first days.

During the reporting period, the 911 service received 2,264 calls about the coronavirus, 983 citizens received medical advice and another 987 were provided with psychological assistance, he said.

The minister said also that due to the restrictions the psychological assistance service switched to remote work.

He said because of too many calls he doubled the number of doctors who are on duty 24/7. He said citizens can call 911 at any time and the doctors on duty will provide free medical advice.

The Armenian Council of America is committed to promote the civic and civil rights interests of the Armenian American community, and to champion the causes and concerns of the Armenian-American community within local, state, and federal governments.

law time and again and rather than having their aid cut for this violation, it has increased. It is clear that they have no intention of reaching a peace agreement with Armenia and Artsakh and are using the US government to advance their agenda of terror and bloodshed,” he added.

Ապագան Հայաստանի Հետ Կապող Ֆրանսահայ Գործիչը Ով Է Ալֆորվիլի Նոր Փոխադարձապետ Մարտիրեանը



Ալֆորվիլի փոխադարձապետ Սարո Մարտիրեանը քաղաքապետարանի աշխատակիցների հետ

ՄԱՐԻԱՆՆԱ ՓԱՅՏԵԱՆ

Ֆրանսիայի հայաշատ Ալֆորվիլի փոխադարձապետի պաշտօնում ընտրուեց հայազգի Սարո Մարտիրեանը: Ինչ կշիռ ունեն հայերը բարեկամ Ֆրանսիայում համայնքի յենասիւնների՝ Շառլ Ազնաւուրի եւ Պատրիկ Դեւեջեանի մահից յետոյ. «Sputnik Արմէնիան» բացառիկ հարցազրոյց է ունեցել նորանշանակ պաշտօնեայի հետ:

Ալֆորվիլ քաղաքը Ֆրանսիայում յայտնի է որպէս «Փոքրիկ Հայաստան» ոչ միայն շնորհիւ հայկական մեծ համայնքի, այլեւ հայկական այն կառուցները, որոնք ազատօրէն գործում են քաղաքում: Հէնց այդ էր պատճառը, որ տարիներ առաջ Մարտիրեանների ընտանիքը որոշեց թուրքիայից Ալֆորվիլ տեղափոխուել, ապրել մի երկրում, որտեղ պէտք է վախենալ հայ լինելու համար:

Թուրքիայում հայ լինելը խիզախութիւն է

Նախնիներս մուսալեուցի են, Վաքըֆ գիւղից: 1915 թուականին նրանք մասնակցել են Մուսալեուի յայտնի հերոսամարտին: 1939թ.-ին, երբ լեւան շրջակայ գիւղերը նորից թուրքերի ձեռքն են անցնում, շատերը որոշում են հեռանալ, բայց իմ նախնիները մնում են: Թուրքերը ստիպում են մնացողներին փոխել իրենց հայկական ազգանունները: Այդպէս պապիկս ծնունդով Մարտիրեան, 16 տարեկանում ստիպուած դարձավ Սիլահլի:

Յետոյ գաւազներին հայերէն կրթութիւն տալու համար պապիկս հորս եւ հօրաքրոջս ուղարկել է Պոլիս, որտեղ հայրս հանդիպել է մօրս հետ: Ես Պոլիսում եմ ծնունդով: Թուրքիայում հայերի համար լաւ է, այնտեղ հայ լինելը պատիւ է, շատերը վախենում են ցոյց տալ իրենց հայութիւնը: Ինչպէս ժամանակին մեծ հայրիկս գաւազների կրթութեան համար ստիպուած եղաւ նրանց Պոլիս տանել, այնպէս էլ հայրս, մտահոգուելով ապագայիս ու կրթութեանս մասին, Ֆրանսիա տեղափոխուելու որոշում կայացրեց:



Ալֆորվիլի փոխադարձապետ Սարո Մարտիրեանը հօր, պապի եւ որդու հետ

Փոքրիկ Հայաստան՝ Ֆրանսիայի սրտում

Հաստատուեցինք Ալֆորվիլ քաղաքում, որովհետեւ սա Փարիզի շրջանի փոքրիկ Հայաստանն է. կայ հայկական դպրոց, եկեղեցի, հայկական անուններով փողոցներ՝ Կոմիտասի, Մանուշեանի, Երեւանի պողոտայ, Օշական, Աշտարակ հրապարակներ եւ այլն: Քաղաքում, քաղաքապետարանում ծածանում են Հայաստանի եւ Արցախի դրօշները, ունենք հայկական խանութներ:

Քաղաքը 44 հազար բնակչութիւն ունի, որից 7-8 հազարը հայեր են: Այստեղ՝ Ալֆորվիլում, տարիներ անց մեր ընտանիքը հայկական ազգանունը վերադարձրեց: Պապիկս դեռ ողջ էր. նա ծնունդով Մարտիրեան,

կեանքի մաս մեծը պարտադրուած ապրեց Սիլահլի, բայց մահացաւ Մարտիրեան:

Ինչու չեղարկուեցին Ֆրանսիայի եւ Արցախի «քոյր քաղաքների» համաձայնագրերը

Ալֆորվիլի ու Արցախի Բերձորը քոյր քաղաքներ էին: Ֆրանսիայում մի քանի քաղաքներ նման բարեկամական համաձայնագրեր ունէին Արցախի քաղաքների հետ: Բայց մի քանի տարի առաջ նախագահ էմանուէլ Մակրոնն ասաց, որ Արցախը ճանաչուած պետութիւն չէ, հետեւաբար չեն կարող նման պայմանագրեր լինել, ու դրանք լուծարուեցին: Շատերս կասկածում ենք, որ այս գործում իրենց դերն են ունեցել ադրբեջանցիներն ու թուրքերը, թէպէտ դրա ապացոյցը չունենք:

Ի հարկէ, հայերը սիրուած են Ֆրանսիայում, դրա համար էլ քաղաքների ղեկավարներից շատերը յայտարարեցին, որ պայմանագրերի չեղարկումը ոչինչ չի փոխում, իրենց բարեկամութիւնը շատ աւելին է: Ալֆորվիլի նախկին քաղաքապետն Արցախում եղել է, նորընտիր քաղաքապետն էլ այս տարի Սեպտեմբերին պէտք է Արցախ այցելի, եթէ վերուսը չխանգարի:

«Բոլոր հայերն իմ ընտանիքի անդամներն են». Ազնաւուրը՝ հայերի ու իր հայկական ինքնութեան մասին

Հիմա Ալֆորվիլի 16 փոխադարձապետներից երեքը հայեր են: Հայերը պէտք է շատ ակտիւ լինեն, որ կարողանան իրենց ձայնը տեղ հասցնել, ներկայացնել իրենց շահերը քաղաքապետարաններում, Սենատում, բարձր մակարդակներում: Շառլ Ազնաւուրն ու Պատրիկ Դեւեջեանը մեծ հեղինակութիւն ունէին Ֆրանսիայում, նրանք խօսում էին Հայաստանի, հայերի, Յեղասպանութեան մասին: Հիմա նրանք չկան, եւ այս իրավիճակում թուրքերն ու ադրբեջանցիներն աւելի են ակտիւանում:



Ալֆորվիլի փոխադարձապետ Սարո Մարտիրեանը հայկական խաչքարի մօտ

Ադրբեջանցիներն ու թուրքերն ամրացնում են դիրքերը

Էրզողանը Ֆրանսիայ եկող թուրքերին ասում է, որ իւրաքանչիւրդ աշտեղ թուրքիայի դեսպանն էք, յաջողութեան հասէք, ակտիւ եղէք, մտէք քաղաքականութիւն, Ազգային ժողով, զբաղեցրէք պաշտօններ: Ադրբեջանն էլ մի լիոնաւոր գումարներ է ծախսում: Շուտով Փարիզի քաղաքապետի ընտրութիւններն են, շատ հաւանական է, որ քաղաքապետ ընտրուի ադրբեջանամէտ Ռաշիդայ Դատին:

Նա արաբական ծագումով ֆրանսուհի է, որին ադրբեջանցիները մեծ գումարներ են տալիս: Ադրբեջանցիները շատ ակտիւ են մասնակցում ընտրութիւններին իրենց թեկնածուին առաջ մղելու համար: Մենք էլ պէտք է այդպէս վարուենք: Իրենք շատ փող ունեն, իսկ մենք՝ ոչ: Ադրբեջանցիների եւ թուրքերի ակտիւացումը շատ վատ է, որովհետեւ իրենք կարողանում են Ֆրանսիայի վրայ ճնշումներ գործադրել:

Սփիւռքում հայերն ապագայ չունեն

100 տոկոս հայ, 100 տոկոս ֆրանսիացի. Ազնաւուրն էր իր մասին այսպէս ասում: Ես համաձայն եմ այս մտքի հետ, բայց ինձ համար այս երկուսը նոյն արժէքը չունեն: Իմ ազգութիւնն է հայ, քաղաքացիութիւնս՝ ֆրանսիացի, ես կարող եմ այլ երկրում ապրել՝ Ուրուգուայում, ԱՄՆ-ում, իմ քաղաքացիութիւնը կարող է փոխուել, բայց ազգութիւնս՝ ոչ:

Ես հիմա Ֆրանսիայի քաղաքացի եմ եւ արդէն նաեւ պետական պաշտօն եմ զբաղեցնում, այնպէս որ պիտի նուիրումով ծառայեմ իմ քաղաքին՝ Ալֆորվիլին: Բայց ես իմ ապագան Հայաստանի հետ եմ կապում, քաղաքականութիւն էլ մտայ Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւններից յետոյ: 2008թ.-ին՝ Մարտի 1-ի դէպքերից յետոյ, սփիւռքը կարծես թէ լուռ էր, չէր արձագանքում Հայաստանում

Ոգնիի Փուշերէն

ՄԻՆԱՍ ԳՈՏԱՅԵԱՆ

Ե- Յայու Սեծամտութիւն եւ Նման Բաներ

Արեւելքցիի, հաւանաբար նաեւ ընդհանրապէս մարդկային տկարութեան արտայայտութիւնն է մեծգլխութիւնը կամ մեծամտութիւնը: Օրինակ՝ յաճախ կը լսենք.

- Դուն գիտե՞ս ես ո՞վ եմ:
- Ես որ կ'ըսէի դուն ո՞ւր էիր:
- Երբոր մենք՝ հայերս Գառնիի տաճարը կը կառուցէինք, Եւրոպայի ազգերէն շատերուն նախահայրերը կ'ապրէինք: Եւրոպայի վրայ կը ցատքէին:

- Ես գիտեմ ի՞նչ կը խօսիմ (կոր):
- Երբոր ես կը խօսիմ, դուն կը լուս:

Եւ այլն եւ այլն: Վերջին ամիսներուն մեծամտանալու նոր առիթ մըն ալ ստեղծուեցաւ՝ առնչուած պատկաժահարի համաճարակի հետ: Մասնագէտներ, պետական բարձրաստիճան անձնաւորութիւններ, հոգեւորականներ եւ այլ խելամիտ մարդիկ աղաչելու պէս կը խնդրէին ու կը խնդրեն տակաւին զգոյշ ըլլալ, դիմակ դնել, ձեռնոց հագնել, եթէ ստիպուած են տունէն դուրս ելլել, խոսափել այցելութիւններէ եւ նման բաներ:

Առջի օրը նկատեցի որ տնական ոգնիս ալ սկսեց ի իր ձագուկներով ինձմէ փախչիլ եւ քանի մը մեթր հեռուէն երթալ իր գործին: Այս տեսարանը քանի մը անգամ կրկնուելէ ետք փորձեցի հասկցուիլ. հազիւ մօտեցայ իրեն, ձագուկները ետեւը նետեց եւ փուշերը տնկեց: Ինչ ըսեմ՝ վախցայ իսկապէս:

Արագ մը վերլուծելէ ետք տհաճ կացութիւնը այն եզրակացութեան եկայ թէ ոգնիս բնազդօրէն ինքզինք եւ ձագուկները հեռու կը պահէ ինձմէ: «Ինչ խելացի կենդանի», մտածեցի: Ոգնի ըլլալով եւ մեր նման բանական արարած չըլլալով հանդերձ, փշոտ բարեկամս լաւ հակցեր է մահացու վտանգը եւ պատասխանատուութեան զգացում ունենալով՝ ինչինք հեռու կը պահէ ինձմէ, որ իր ձեռքերուն մէջ պահած է զինք:

Հազարաւոր մարդիկ, որոնց մէջ նաեւ իմ մեծամիտ հայրենակիցներս, ոգնիս չափ ալ «խելք» ու հոտառութիւն չունին: Խնդրեմ՝ կը լսենք այսպիսի արտայայտութիւններ.

- Ինչ «վիրուս-միրուս», պարապ բան է:
- Ինչ էք ասում, «վիրուս-միրուս» չկայ, «սաղ» սուտ բան ա:
- Դիմակ դնողները չե՞ն մեռնիր (կոր):
- Ես թաւու-նարտիէն ե պլոթէն ետ կեցողը չեմ:
- Եղածը մեծ պետութիւններու յօրինածն է...:

Եւ այլն, եւ այլն: Այն օրը կարգացի թէ Քալիֆորնիայի եւ Հայաստանի մէջ ժահրէն վարակուածներուն թիւը չէ պակաս, այլ աւելցած է... նոյնիսկ մեր երիտասարդ վարչապետն ու իր ընտանիքը: Փոխանակ քաջալերական խօսքեր եւ բարեմաղթանքներ յղելու իրեն եւ ընտանիքին, հայու անուն-մականունով մարդիկ, դիմատետրամոլներ (ներող եղէք այս շինծու եւ երկարավիղ բառին համար), վախկոտ եւ

մատներու ետեւ պահուրած մեր հայրենակիցներէն շատեր, օ՞րս եղաւ ըսելու պէս սիրտերնին կը զովացնեն, նոյնիսկ յոյսեր կը կապեն վերադառնալու իրենց փտած աթոռներուն, ակունքը կը սրեն՝ փոխանակ պահիկ մը մտածելու կամ մտահոգութեամբ որ մեր ակամայ դրացի պետութիւնը նոյնպէս ակունքն ու մագիլները կը սրէ այս օրերուն՝ այս անգամ վերջին մահացու հարուածը տալու (ըստ իրենց մեծամտութեան) հայկական Արցախին ու Հայաստանի Հանրապետութեան:

Խելքի աշեցէ՛ք,- պիտի ըսէր մեր անմահ աշուղը:

Ձ- Ոգնիս Կը Մեկնի Ուղիւն

Ինչ ըսեմ այս ոգնիս, որ կը խանգարէ յետ-միջօրէի մրափս եւ մեղմօրէն կը ծակծկէ գիս իր փշիկներով:

Ինչ եղար, հիմա ինչ կ'ուզես,- կ'ըսեմ կէս հանդիմանական շեշտով:

-Այդ ինչ լեզուով կը խօսիս հետս, տէ՛ր իմ,- կը պատասխանէ ան իր փշերէնով,- փոխանակ օգնելու, սիրտ տալու եւ իմ մասիս գրելու, սրտնեղութեամբ կը վարուիս հետս:

Ոգնիս երբեք այս ոճով չէր խօսած հետս: Լուրջ հարց մը կար ուրեմն: Նստեցայ, ակնոցներս դրի որ աւելի լաւ հասկնամ եւ ճիշդ ըմբռնեմ պահի լրջութիւնը: Եւ ինչ տեսնեմ աղէկ՝ իմ մայր ոգնիս ձագուկները հաւաքեր է եւ գինուորներու պէս շարեր է ետեւ ետեւի:

Այս ինչ նորութիւն է, մայր Ոգնուհի, պատերազմի՞ կ'երթաս, որո՞ւն դէմ, դրացիին շո՞ւնը կ'անհանգստացնէ նորէն,- կը հարցնեմ մտահոգ շեշտ մը դնելով հարցումիս մէջ:

Ինչ շուն, ինչ դրացի, կը պատրաստուիմ անդրովկիանոսեան նաւ մը նստիլ, հասնիլ Եւրոպական մայր ցամաք եւ հոնտեղէն ամէնէն արագ միջոցներով հասնիլ հայրենիքը: Վտանգուած է հայ ոգնագրիներուն կեանքը, զանոնք պաշտպանելու կը մեկնինք ընտանեօք,- աւելցուց մայր ոգնին եւ ձագուկները առնելով ուղղութեամբ թուփերու ուղղութեամբ: Մի կերպ հասայ ետեւէն եւ հարցուցի մտահոգուած.

Միրելի ոգնիս, բաւական տկար եւ բարի կենդանի մըն ես, ոչ զէնք ունիս, ոչ ալ գրաս, ձեզի հոն հոն կ'ուտեն թշնամիներդ...

Հազիւ բերանս բացի, խօսքս չաւարտած փշիկ մը կերայ սրունքէս:

Տէ՛ր իմ, բարի մարդ ես, բայց միամիտ ես: Կ'երեւայ թէ աշխարհէն լուր չունիս: Հայկական Ոգնաստանի վրայ յարձակելու կը պատրաստուիմ ձեր դրացիներու բորենիներն ու գորշ գայլերը: Թերթ, համացանցի լուրերը չե՞ս կարդար...

Կը կարդամ, ի հարկէ կը կարդամ, բայց դուք...ը...ը...

Ինչ, կ'արհամարհե՞ս մեր փուշերը, չե՞ս հետեւի Ոգնաստանէն եկած լուրերուն, ուր ազգակիցներդ կոկորդի ինկած են գիրար խեղդելու համար փոխանակ պաշտպանութեամբ մասին հոգալու,- ըսելով անհետացաւ թուփերուն մէջ:

(Շարունակելի)

Ազնաւորը եւ «Ձուարթնոց»ը



Մեր ժողովուրդը գործ բան չունի կամ ձանձրոյթէն դրդուած ինքնիր գլխուն խնդիրներ կը լառուցէ: Կարծես չէին բաւեր մեր ատաքին եւ ներքին մարտահրաւէրները, թուրքա-ազերիական ակռայ սրելները, մեր ներքին կրծոտող եւ «բոլորը թշնամի բոլորին դէմ» աւանդական դարձած մեր կեցուածքը, արեւմուտքէն եւ հիւսիսէն աղաղակող սպառնալիքները, այս օրերուն ելեր ենք գեղեցիկ եւ ականջի հաճելի, բովանդակութեամբ ալ իմաստալից «զուարթնոց» (հրեշտակ) բառով կոչուած մեր միջազգային օդակայանը կ'ուզենք անուանել հայ ժողովուրդի մեծ զաւակներէն մէկուն անունով՝ Շարլ Ազնաւոր Միջազգային Օդակայան (ՇԱՄՕ- այս յապաւումը իմն է, եթէ դժբախտաբար անուանափոխութիւն մը տեղի ունենայ):

Ո՞վ չի սիրեր Շարլը՝ սկսելով միլիոնաւոր ֆրանսասէրներէն ու ֆրանսախօսներէն մինչեւ իսկ թուրքեր: Ե՞ս ալ կը սիրեմ զինք եւ երիտասարդութեանս կը պաշտէի զինք: Այս տարիքիս ալ սրտնեղութեան պահերուս Ազնաւոր կը լսեմ եւ հոգիս կը լեցուի «քաղցր թախիծով»:

Ո՞ր հայը չի հպարտանար իրմով կամ ո՞ր հայու փառասիրութիւնը չի շոյուի, երբ հայերէն կը խօսի ան եւ ամենայն պարզութեամբ կը յայտարարէ իր ցեղային պատկանելիութիւնը՝ միաժամանակ ըսելով թէ ինք ֆրանսացի է:

Այս բոլորը շատ աղէկ, բայց ինչու՞ պարսկական փոխառութիւն հրեշտակ-ֆարաշտակ բառին զուգահեռ եւ քաղցրահնչուն «զուարթնոց» բառը մէկդի դնենք եւ զայն փոխարինենք օտար արմատներով կազմուած «զաւառութեամբ» բառով: Ինչ եղեր է մեր հայկական ճարտարապետութեան (որով այնքա՞ն արդարօրէն կը հպարտանանք հայերս) գլուխ գործոց ՁՈՒԱՐԹՆՈՑ ինքնատիպ կառուցին, որ աշխարհին յայտնի է այս անունով: Ասոր կողքին ունինք նաեւ ճարտարապետական յատուկ եզր մը՝ «զուարթնոցատիպ» բառը:

Կը փափաքինք այս ՄԵՄ հայուն անունը յաւերժացնել, շատ լաւ, ոչ ոք հակառակը կը պնդէ, խնդրեմ՝ իր անունով ունինք սքանչելի հրապարակ մը, ունենանք նաեւ երաշտական դպրոցներ (փոխանակ թիւ աշխիւն երաժշտական դպրոցներու): Թող մեր «էստրադային» նուագախումբը (կամ նման խումբերէն մէկը) կոչուի իր անունով: ԹՈՂ ԳԻՒՄՐԻԻ ՕԴԱԿԱՅԱՆԸ ԿՈՉՈՒԻ ԻՐ ԱՆՈՒՆՈՎ, քաղաք մը, որուն ողբերգութեան առաջին հասնողներէն մէկը ԻՆՔ եղաւ՝ իր հետ քաշելով ֆրանսական մշակոյթի գործիչները:

«Ձուարթնոց» օդակայան (օդանաւակայան...): Չէ՞ որ օդանաւերը (ինքնաթիռները) հրեշտակներու պէս օդ կը բարձրանան եւ միլիոնաւոր մարդիկ տեղ կը հասցնեն...:

Միմաս Գոճայեան

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.


Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel:----- Email:-----

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
 Tel: (626) 797-7680

«Ակնթարթներ» Պէպօ Սիմոնեան (Գ.)

ԱԽԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն, Հ.Կ.Բ.Մ. Սահակեան Լեւոն Մկրտիչեան գոլէճին տնօրէնն էր Պ. Սիմոնեան: Գահավէժ դէպքերու բերումով, վարժարանը գտնուեցաւ վտանգաւոր շրջանի մէջ: Ի հարկէ, անոր մտահոգութեանց առանցքը կը մնային աշակերտներուն ապահովութիւնը, դպրոցական կեանքին հեզասահ ընթացքը եւ նուազագոյն կորուստներով կացութեանն դուրս գալու հրամայականը:



Սակայն, ցաւ ի սիրտ, ունեցանք զոհեր: Կոյր ու մեակոծութեան մը ընթացքին, իր տան բակը նահատակուեցաւ բոլորին կողմէ սիրուած Թալին Շէմէմեան աշակերտուհին: Կսկծալի «ակնթարթ» մը ապրեցաւ տնօրէնը: Խիստ յուզական: 9 Հոկտ. 1985-ին կը գրէր «Մնայուն Բացակայութեան Մը Տիրութիւնը...»: (կարգ մը տողեր անկէ):

«Մնայուն բացակայութեան մը տխրութեամբ բացուեցաւ վերամուտի ներկայութեան տետրակին առաջին էջը...»:

Աթոռ մը պարապ էր մնացած...: Իր բացակայութենէն տխրած աթոռը...:

Ինծի համար դժուար, գրեթէ անկարելի թուեցաւ ջնջել իր անունը՝ Թալին Շէմէմեան՝ արձանագրութեան դպրոցի մատեանէն: Մեր հոգիներուն մէջ արձանագրուած անջնջելի տպաւորութիւններու եւ բարի յիշատակներու մատեանէն...:

Կը գրէր մաքուր ու կոկիկ...: Տետրակները կը գործածէր թծախնդրութեամբ...:

Գիրքը ձեռքէն չէր ձգէր...: Կը սորվէր անվերջ...:

Բայց տխրութիւններուն ծանրագոյնովը համակուած են մինչեւ մահը պատերազմին ու ռուսներուն արհաւիրքէն հետապնդուած հէք Թալինին մնայուն բացակայութիւնը զգացող ուսուցիչները, դասընկերները, իր յօրանջող գրասեղանն ու թափուր աթոռը, դասարանին պատերը...:

Պ. Սիմոնեան ակնյայտ թուլութիւն ունէր նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակի նկատմամբ: Սահակեանի գրադարանը կոչուեցաւ անոր անունով: Եւ օր մը, Ռ. Սեւակի անունով դպրոց մը կոչուեցաւ Երեւանի Նոր Արաբկիր թաղամասին մէջ:

Դժգոհելով Երեւանի դպրոցներուն մեծ մասամբ թուանշաններով ըլլալու տհաճ փաստէն, 2002-ին կը գրէր. «բազում այլ դպրոցներու պէս անշունչ եւ անհմայ թիւերով կը բնորոշուէր: Թիւ այսինչ դպրոց...: Չէիր սիրած չոր ու ցամաք թուանշաններով բնորոշումները՝ հայրենի կրթութեանը...: Երբ մեր պատմութիւնն ու մշակոյթը այդքան հարուստ էին հերոսներով, սուրբերով, նահատակներով, Ոգեղէն Բանի արարիչներով...»:

1988-ին պայթեցաւ զարաբաղեան շարժումը: Ալեկոծուեցաւ ազգային կեանքը, այս անգամ մարտական մակընթացութեամբ: Ղարաբաղը հայկականացաւ Արցախ դառնալով՝ անհամար նահատակներու արեամբ եւ արիւնալի անընկրկելի գուպարով: Այդ փոթորկացող օրերուն, 18 Մարտ 1989-ին գրեց՝ «Հայկական Ղօղանջ՝ Ղարաբաղը Հայ է, Արցախը Մերն է»: Ահա անոր գլխաւոր տողերը...:

-Ե՛ս հայոց հողին դարաւոր

բոյրն ու շունչն են խեղդուած...:

-Մենք հայոց սարերէն պոկուած շառաչն ենք քարին...:

-Մենք արդարութեան Աստուծոյն ուղղուած բողոքներ? անդա՞ծ...:

-Հայ տառապանքին խաչերն ենք արդար՝ փրկութեան յառած...:

Այսպէս կ'աւարտի բանաստեղծութիւնը.

ճիշդն ցաւերէն խելագարօրէն պահանջներուն հետ իր իրաւունքին

կանգներ է անզուսպ, ծառացեր՝ խիզախ

հայ ղօղանջներով ցեղային սրտին

կը զանգահարէ՝

համայն աշխարհին ու թշնամիին

-Ղարաբաղը հայ է, Արցախը մերն է...:

Սոյն բանաստեղծութիւնը, այդ օրերուն, յաճախ կը հնչէր բեմերէ, տարբեր ձեռնարկներու ընթացքին, որպէս օրուան խորհուրդ եւ ազրու պատգամ:

Որպէս Պէպօ Սիմոնեանի աշակերտ եւ ապա կուսակից ու պաշտօնակից, բազում «ակնթարթներ» կը յամենան յիշողութեանս մէջ, ինչպէս որ հարիւրաւոր աշակերտներ, պաշտօնակիցներ, գրչակիցներ, ընկերներ եւ հարազատներ ունին անջնջելի «ակնթարթներ»:

-Ռուբինեան վարժարանին դասարանները հասնելու համար,

երկար շարք մը աստիճաններ պէտք է բարձրանայիր: Զախիդ կար «պատի թերթեր»: Շրջան մը գանգրահեր, յօնեղ, հաստապուռնկ եւ ոչ համակրելի տղամարդու լուսանկար կը նկատէի եւ շուրջը գրութիւններ: Տարիներ յետոյ պարզեցի, որ Պարոյր Սեւակի նկարն էր, հաւանաբար անոր մահուան առթիւ «պատի թերթ» իրեն նուիրուած՝ քերթուածներով հանդերձ: Պ. Սեւակի առաջին ծանօթացումնս այդ «ակնթարթ»ով եղաւ՝ տնօրէնին շնորհիւ:

-Սահակեանի ատենամարզանքները շատ տպաւորած են զիս: Տնօրէնն ալ յատուկ ինամքով եւ բարեխղճօրէն կը պատրաստէր, գանոնք շահեկան եւ ուսանելի դարձնելու համար: Առիթով մը, հիւրերէն մէկը երգիծանկարիչ Տիրան Աճեմեանն էր: Ան հապճեպօրէն, սրահին մէջ, բեմին վրայ, աշակերտութեան առջեւ ուրուագծեց տնօրէնին երգիծանկարը՝ կողքէն դիտուած: Երգիծանկարչու թեան ծանօթութիւնս այս «ակնթարթ»ով եղաւ:

-Արդէն աւարտական, 1983-ին, դասերէն մին էր վահան Տէրեանի գրականութիւնը: Որպէսզի տպաւորուէիք, բանաստեղծին նշանաւոր «Մոռանալ» լաւապէս ըմբռնեց, դասարանին մէջ լսեցինք բանաստեղծութիւնը՝ երգով: Մեր սիրելի դասընկերուհին Լենա Թաշճեան իր հօր՝ արդէն լուսաբնակ, հայ երգի հանրածանօթ տարածիչ ընկ. Գէորգ Թաշճեանի (ձօ) արխիւէն բերած էր ձայնասկաւառակ մը եւ մենք ե՛ւ կարդացինք ե՛ւ լսեցինք Տէրեանը: Անմոռանալի՝ «ակնթարթ»:

-Այդ շրջանին, Սահակեանի շէնքին կողքը բացատ մըն էր: Օր մը, տնօրէնը շէշտելու համար բնութեան եւ ծառերուն կարեւորութիւնը եւ անոր ազգային խորհուրդը, դասարաններով ծառեր տնկեցինք: Ասմունքեցինք՝ «Ասք Ծառ Տնկելու Մասին»: Այդ տարիներու աշակերտները չեն կրնար չյիշել այնքա՞ն տպաւորիչ այդ հիանալի միտքն ու նախաձեռնութիւնը:

-1980-ականներուն, Ապրիլ 24-ի ատենամարզանքի աւարտին, խօսք առնելով տնօրէնը, հաստատապէս եւ վճռօրէն ըսաւ՝ «Արեւմտեան Հայաստանի հողերը երէկ մերն

էին, այսօր մերը չեն, վաղը անպայմանօրէն մերը պիտի ըլլան»: Այս խօսքը ինծի համար «ակնթարթ» է աւելի եղաւ կարգախօս, պատգամ եւ ուխտ մը ազգային:

Վերջին «ակնթարթ»ներէն էր 2012-ի Յունիս 20-ին մեր հանդիպումը, Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան 125-ամեակին առիթով, Պէյրութ Ֆորումի ընդարձակածաւալ սրահէն ներս: Տարիներու ծանր բեռը ակնբախ էր անոր ուսերուն. հիւսած էր համարեա. բայց՝ սրահին խանդաբորբ մթնոլորտը, յեղափոխական եւ երիտասարդական յախուռն միջավայրը, օրուան երգերն ու խօսքերը, երիտասարդական աւելն ներարկեցին անոր: Անօրինակօրէն ոգեւորուած էր ան. կարծէք նոր մարդ դարձած էր՝ երբ սրահը ծայրէ ծայր պեծածանօրէն ողողուած էր հնչակեան կարմիր դրօշներով:

Երգիչը երգեց՝ Նորից պիտի ելլենք, Սասնոյ սարերը

Չոր ու դաշտ ներկենք կարմիր արիւնով:

Չէ՞ որ Պ. Սիմոնեան մօտիկ անցեալին պատգամած էր՝ այդ «հողերը անպայմանօրէն մեր պիտի ըլլան»:

Եւ 15 Դեկտ. 2014-ին ալ, կարծէք փոխանցեց իր «կարապի երգը».

Ու քալեցինք ազգովին: Պիտի քալենք տակաւին,

Սինչել վերջին հայը հայ, որ կը յուսայ իր երկրին

Յողը փորել, տուն շինել ապագայի երազով

Ամէն առտու արթննալ Արարտի աղօթքով:

Հինգ տարի առաջ, 27 Մարտին, դադրեցան «ակնթարթներ» ըստ այնքա՞ն քալող ուղեւորին, որ սերունդներ կերտեց, գիր ու գրականութիւն սփռեց, էջեր ու գիրքեր կտակեց, մամուլի էջերով մշակոյթ ու մտորումներ կիսեց:

Եւ ի՞նչ կրնանք ըսել, եթէ ոչ՝

Թէեւ հեռացաւ քալող մը ուխտաւոր, բայց՝ մենք կը քալենք տակաւին, մինչեւ հայը վերջին, որ պիտի հասնի իր նպատակին:

(ՎԵՐՋ)

**Pasadena Unified School District
Armenian Dual Language
High School Program. (DLIP)**

The program will be located at Blair School, home to PUSD's International Baccalaureate programs.

2020-2021 Registration for the Armenian Dual Language Immersion High School Program at Blair is now open!

Armenian Dual Language Immersion Program


626-396-3606

openenrollment.info

Մեր Վարսավիր Վրէժը

Ռ. ԿՈՐԻԻՆ

Երբ հայեացք ես նետում քո շրջապատին կամ հանդիպում ես շփում ես ունենում գործով եւ այլ առիթներով՝ տեսնում ես որքան խոնարհ եւ համեստ հայ արհեստաւորներ կան, որոնք օրն ի բուն տքնում են գոյութիւն եւ ընտանիք պահելու, ազգային ոգով երեխայ դաստիարակելու եւ հայրենիքի ուրախութիւններով եւ հոգսերով մտածում օգտակար լինել թէ նիւթականով կամ ծառայութեամբ, այս հոգեվիճակը զգալով նրանց մօտ գոհունակ սրտով ցանկանում ես գրիչ վերցնել եւ մէկիկ-մէկիկ նրանց մասին գրել եւ մեծարել: Այս գրութեամբ նկատի ունեմ իսկապէս մեր արժանաւոր արհեստաւորներին, որոնք մեր սփիւռքեան կեանքում իրենց արարքով, վերաբերմունքով, վստահելու թեամբ, ճշտապահութեամբ եւ ճշմարտախօսութեամբ հայի պատիւը բարձր են պահում իրենց ապրած երկրներում, յարգանք եւ պատիւ իրենց:



Ծատեղիները գնահատելի ծառայութիւններ են մատուցում տարբեր ազգի քաղաքացիներին: Վարպետ Վրէժը ճամբորդութեան ընթացքում դէպի Հայաստան սիրահարւում եւ ամուսնանում է Հայաստանցի աղջկայ հետ, ամուսնութեան հարսանեաց հանդէսը կատարում է Թեհրանում, կազմում են հայկական ընտանիք բախտաւորութեամբ երկու զաւակներով: Նա իր պատանեկան եւ երիտասարդական տարիներում «Չարմահալի հայ ուսումնասիրաց» միութեան աշխատանքներին է մասնակցում՝ թատերական եւ մշակութային ծառայութիւններին նուիրուած: Նրա վարպետութեան երկար տարիների յաճախորդները Թեհրանից հաստատուած են Լոս Անջելէսում, կայուն յաճախում են իր մօտ, վարպետ Վրէժը բացի այն որ տիրապետում է իր արհեստին նաեւ բնաւորութեամբ եւ վերաբերմունքով համեստ, ազնիւ եւ մարտկալին նկատարողով արժանի ունեալ մի անձնաւորութիւն է, այնպէս որ գրաւում է յաճախորդներին մշտական իր մօտ յաճախելով նոյնիսկ հեռաւոր վայրում ապրելով:

Ահաւասիկ մէկն այն հազարաւորներից, որ այստեղ Գլենդէլում է հաստատուել 2007 թ. Թեհրանից, ոչ թէ որպէս սկսնակ, այլ որպէս վարսավիր կայացել է Թեհրանում, դպրոցական շրջանում ամառուայ արձակուրդներին սովորել եւ աշխատել է մեծ եղբօր էդիկի մօտ եւ նրա քաջալերանքով ու օգնութեամբ դարձել է վարպետ վարսավիր, երիտասարդական վաղ տարիքում հիմնել է իր սեփական վարսավիրանոցը Թեհրանում: Նա այստեղ պաշտօնապէս վարսավիրի արտօնագիր է ստացել եւ կեանքի է կոչել նոր սափրիչները: Նուստստ երկար տարիներ է Թեհրանից սկսեալ եւ այստեղ Գլենդէլում նրա մօտ եմ սափրում:

Վարպետ Վրէժը ազգանունով՝ Մովսիսեան, տարիքով վաթսուներեակոխած թիկնեղ կազմուածքով եւ միջակից բարձր հասակով որ վերից լաւապէս տիրապետում է սափրող յաճախորդին: Նա ծնողների հինգ որդի եւ մի դուստր զաւակների միջնեկն է, ծնողները եւ եղբայրներից երեքը իրենց քրոջ հետ ապրում են Թեհրանում, իսկ Վրէժն ու Սուրիկը՝ վարսավիր, ապրում են Գլենդէլում, Հետաքրքիրն այն է, որ ընտանիքի չորս հոգին՝ էդիկ, Սուրիկ, Վրէժ եւ Նորիկ սափրիչ են ունենալով իրենց սեփական գործատեղին:

Վարպետ Վրէժը միջնակարգ ուսման շրջանաւորում ընդունակ աշակերտ է եղել, նա յաջողում է Թեհրանի պետական համալսարանի մուսքի քննութիւններում, սակայն զուգադիպելով իրանի իսլամական լեղափոխութեան համալսարանները մի քանի տարի փակուած են մնում, ստիպուած աշխատանքի է անցնում եւ դառնում է վարսավիր:



Արհեստին տիրապետող-մասնագէտ արհեստաւորը առաւել գնահատանքի եւ գովասանքի է արժանանում, երբ օժտուած է լինում առաքինի յատկանիշներով, իրանից եւ այլ գաղթօջախներից այստեղ Լոս Անջելէսում հաստատուած մեր հայ արհեստաւորները՝ մեքենայագործ տեխնիկ, շինարարներ, էլեկտրագործ, երկաթագործ, փականագործ, ոսկրիչ, ժամագործ, դարբին, ջրամուղագործ, հիւսն, ատաղցագործ, վարսավիր եւ այլն ստեղծելով իրենց սեփական գոր-

Լոս Անջելէսում համաճարակի պատճառով վարսավիրանոցներն եւս փակ էին, ճգնաւորի փրչոտ տեսք էի ստացել: Որոշ արտօնութիւնների լոյսի ներքոյ վարպետ Վրէժը ինձ ազատեց այդ փրչոտ մագերից: Սափրելիս նա իր հետաքրքիր գրոյցներով զբաղեցնում է յաճախորդին, այնպէս որ անհիման ժամանակը անցնում է գոհ եւ ուրախ թողնելով վարսավիրանոցը: Այս քովիդ-19 պակասաճարի կապակցութեամբ ինք եւս յաճախորդների ուշադրութեան է յանձնում լրջութեամբ ընդունել պետական պատասխանատուների եւ բժիշկների պատուէրներն ու խորհուրդները, որպէսզի անփորձանք ազատուենք այս վտանգաւոր համաճարակից:

Նկատելով արուեստի եւ այլ բնագաւառների երախտաւոր անձիք գնահատուած եւ պարգեւադրուած են, ցանկալի է որ արժանաւոր արհեստաւորներն եւս պաշտօնապէս ազգային մարմինների կողմից գնահատուեն: Ես կարծում եմ, որ արհեստաւորները իրենք պիտի մտածեն եւ միութիւն կեանքի կոչեն, ինչպիսին տարիներ է Թեհրանում գոյութիւն ունի հաւաքագրելով արհեստաւորներին մի տանիքի ներքոյ: Կը յուսանք այս գրութիւնը իսթան կը հանդիսանայ այդ միութիւնը կազմելու եւ սկսելու համար:

Բոլոր արժանաւոր արհեստաւորներին ասում եմ վարձքներդ ի կատար յարգանքի անկեղծ հաւաստիքներով:

Նոր Հրատարակութիւն «Արմէնիքի Լիրա» (Հայկական Քնար) Բանաստեղծութիւններու Ընտրանից



ՆՈՐԱՅՐ ՏՍՏՈՒՐԵԱՆ

Լոյս տեսաւ (Արմէնիքի Լիրա, «Հայկական Քնար») բանաստեղծութիւններու երկրէզու թարգմանական ընտրանիս: Հայկական ժամանակակից 24 բանաստեղծութիւններու յունարէն թարգմանութիւնն է հատորը: 57 էջ: Երկու տարուայ աշխատանքս է: Ներառուած բանաստեղծներն են, Պոլիսէն՝ Զահրատ, Նուէր Սիլահլը (Տատուրեան), Իգնա Սարըասլան, Անդան Խօզէր, Հայաստանէն՝ Յովհաննէս Գրիգորեան, Ռուբէն Հախվերտեան, Հայր Իսահակ Վարդ. Պօղոսեան: Գիրքը ունի իւրաքանչիւր բանաստեղծի կենսագրութիւնը եւ լուսանկարը, բանաստեղծութեան հայերէն բնագիրը, առաւելաբար՝ 20 հատ սեւ-ճերմակ գեղարուեստական լուսանկար, բանաստեղծութեան իմաստին համապատասխան, լուսանկարիչ՝ Վազգէն Տէղիրմէնթաշ (Քանատա): Կողքի լուսանկար՝ նոյն հեղինակէն: Նախաբան՝ էլէնի Յակուրի (Ժամանակակից եւ Դասական յունարէնի դասախօս): Տպաքանակ՝ 50: (Միալ չկարդացիք, 500 չէ, այլ՝ 50):

Քանի մը հարցում եկաւ գիրքի մասին: Արտօնեցէք պատասխանեմ, Գիրքին հեղինակը ես եմ, այսինքն 24 բանաստեղծութիւնները եւ թարգմանեցի, բոլոր կենսագրութիւնները եւ գրեցի: Գիրքը գոտ յունարէն է: Ամէն բանաստեղծ իր գործերէն առաջ յատուկ էջի վրայ ունի իր կենսագրութիւնը եւ լուսանկարը: Գիրքը գրաշարեցի եւ համացանցային տպարանի մը միջոցով, լուսանկարիչ-հրատարակիչ Վազգէնի ձեւաւորումով տպել

տուի, առանց մեկենասի: Համեստ գումար մը գրպանէս ելաւ, հարց չըրի: Ներառուած բանաստեղծութիւնները չունին միաւորող միտք (հայրենասիրութիւն, սէր, ելն.) Այս պատճառով գործածեցի «ընտրանի» բառը, այլ ոչ թէ՛ «հաւաքածոյ» կամ «ժողովածու» կոչումները: Որովհետեւ, իմ ճաշկովս ընտրուած բանաստեղծութիւններ են: Բոլորն ալ արդի, ազատ, արձակ բանաստեղծութիւններ են, չունին չափ եւ լանք: Այլապէս ինձի համար անկարելի պիտի ըլլար թարգմանել: (Զահրատ մը թարգմանել շատ աւելի դիւրին է վարուածանի կամ թէքէքեանի վրայ աշխատելէ): Պոլասալ բանաստեղծներու նիւթն է՝ մարդը մեծ քաղաքի մէջ, անոր ցանկութիւններն ու խեղճութիւնները, մեծութիւնները երբեմն: Հայաստանեանները այսպէս.- Յովհաննէս Գրիգորեանը անկախութեան սեմին կանգնած Հայաստանի (1980-90 թուականներու գործեր են) ողբերգութիւնն է, հայրենական մանր պատկերներ՝ սէրով եւ գութով լեցուած: Իսահակ վարդապետի բանաստեղծութիւնները մենակեաց մարդու ներաշխարհն է, քնարական եւ զգայուն: Զարմանալիօրէն ազատ ու համարձակ սիրային բանաստեղծութիւններ ունի այս հոգեւորականը, չես գիտեր հեռաւոր անցեալի գեղեցկուհի մը համար՝ են գրուած այդ քերթուածները, թէ՛ Մարիամ Աստուածածանի կամ մէկ այլ սրբուհիի համար:

Գիրքը ստանալու համար՝ դիմել թարգմանիչ-հրատարակիչին: Գին՝ \$30

Վրաստան. Անյայտ Անձեր Վնաս Հասցուցած են Հայկական Եկեղեցւոյ Մերձ Գտնուող Գերեզմանատան

Վրաստանի ոստիկանութիւնը սկսած է հետաքննութիւն Ախալքալաքի շրջանի Կոման գիւղին մէջ մշակութային ժառանգութեան յուշարձանը վնասելու փաստի առթիւ, այնպստ անձինք փորած են հայկական եկեղեցւոյ տարածքը, ուր կը գտնուի հին գերեզմանոցը:

Պօսքը կը վերաբերի եկեղեցւոյ, որ կը թուագրուի 19-րդ դարու կէսերուն: Ընդ որում՝ Կոմանը կարելոր է հին աշխարհի պատմութիւնը ուսումնասիրելու տեսանկիւնէ: Հնագէտները բազմիցս յայտնաբերած են այդտեղ կաւէ սպասքի բեկորներ, որոնք կը թուագրուին պղինձի եւ վաղ երկաթի դարերուն:

«Տեղանքը ուսումնասիրելէ ետք արդէն հաստատուած են ծանր սարքերու աշխատանքի հետքերը եկեղեցւոյ տարածքին: Մասնագէտները յայտնաբերած են մարդկային ոսկորներ, որոնք անկանոն կերպով տարածուած են եկեղեցւոյ շուրջ: Եկեղեցւոյ մուտքին մօտ տեղադրուած քարը նոյնպէս վնասուած է», - հաղորդած են կառուցէն:



ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ՊԱՐԸ Է ԵՒ 9 ՀԱՐՅՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՐՅԱԽՈՅԸ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԿԱՐԵՒՐ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ԿԱՐԵՒՐ ԵՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ
ԱՄԷՆ ԱՆՁ ԿԱՐԵՒՐ Է ԱՅՍՕՐ



CaliforniaCensus.org